

Ս Լ Ո Յ Ե

Ա Մ Ա Վ Ի Ւ

ԸՆԳԵՅԻ, ԲԵԼՈՐՈՅԻ, ԳՐԵԴԱՅԻ
ԵՒ ՔԵՐԵՐՈՅԻ


ՈՒԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՀՐԱՄԱ ՄԻԱՅՆԱՑ



ԵՐԱՎՈՐԻՒՄ

Կ ՏԱՐԱՆ ՄՐԲՈՑ ԶԵԿՈՎՐԵԱՅՑ

1873



Ա Բ Ռ Օ Ն

ՈՒԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 3.

ԱՄՍԱԳԻՐ

ՄԱՐՏ 31
1873.

Ա.Զ.ԳԱՅ.ՅԻ. ԲՈՆԱ.ՍԻ.ԲՈ.ԿԱ.Ն ԵՒ ԳՐՈ.ԳԻ.ՑՈ.ԿՈ.Ն

ՈՐԴԻՔ ԱՍՏՈՒԾՈՅ

ՅԱՎ.ՀԱՆՆԵԼ Առաքեալն յանուն
Աստուծոյ որդւոց խօսելով կ'ասէ .
“Աշխարհը բնաւ լը ձանաչեր զմեղ .
վասն զի ըստանաչեցնս զԱստուծած” :
Խիստ պարզ եւ խիստ վեմ է այն
խօսքն, վասն զի կը բացատրէ թէ թ'նչ
սրայման պէտք է Աստուծոյ որդիու-
թեան համար : Աստուծոյ որդիքը ձա-
նակելու համար՝ անշուշտ պէտք է
ինքնին Աստուծոյ որդի լինիլ . իսկ Աս-
տուծոյ որդի լինելու համար՝ հարկ է
նախ զԱստուծած ձանաչել, այն է նո-
րա առ մարդն ունեցած խորհուրդնե-

րն . նպատակներն եւ բարութիւնն իւ-
մանալ . ՚Նա, որ ըս կամեցաւ զԱստ-
ուծ իրեն հայր ունենալ, բնաւ եր-
բէք կորող չէ Աստուծոյ որդիքն իրեն
եղայր ձանաչել . և նա, որոյ համար
մարդկային ագիքի փրկութիւնը իբրեւ
գայթակղութիւն համարուած է ,
միշտ պիտի գայթակղի Աստուծոյ որ-
դւոց ունեցած հաւատքէն , զգա-
ցումներէն և ՚ի սոցանէ ծնուած սուրբ
կեանքին , որ հաւատոյ և սիրոյ եւու-
թիւնն ու կնիքն է :

Ամփոփեմք մեր խօսքը . — Աստու-
ծոյ որդւոց յատկութիւնը թէ ամեն
կատարելութիւնն'րէ գեղեցին է և

թէ միանգամայն խորին գալսնիք նցա համար, որբ զայն զգացած չեն: Աստուծոյ որդւոյ կատարելութեամբ մեք կանոնաւոր կերեւիմք յաջա Երարքն. իսկ անկանոն և անկարգ՝ յաջ արարածոյն: Աստուծոյ որդւոյ յատ կութիւնը նոյն իսկ մեզ համար կը լուծէ մեք կենաց խնդիրը, և զմեզ իբրեւ անլուծանելի խնդիր մի կը ներ կայացնէ յաջ աջապարհի: Աստուծոյ որդիութիւնը կը փառաւորէ զմեզ առաջի հրեշտակաց Աստուծոյ, և նա նախատելի ու ծիծաղելի կը կացուց անէ առաջի ամբոխին: Նա կը բարձրացնէ և կը խոնարհեցընէ զմեզ: Նա մի կողմէն ընդունակ կ'առնէ զմեզ մարդկային ընկերութեան և կենաց, և միւս կողմէն իբրեւ անյաջող և օտարախորթ՝ առաջի նոյն ընկերութիւնը: Աստուծոյ որդին մի կողմէն առաւելէ քան զմարդ, իսկ միւս կողմէն նըւազքան զմարդ: Այս հակապատկեր նկարագիրը առաջ բերելով, մեք նպատակն այն չէ, որ խօսքերու ունայն խաղով նզուարձանամբ, այլ կամիսք աւելի լաւ կերպով պատկերացնելը ըստիառածներից առջեւ իբրենց կրկին վեճակէն եւած կրկնակի պարտաւորութիւնը, կամ աւելի պարզասել, իբրենց երկակի կեանեքին յարակից երկու վրտանգներն:

Ովդիք Աստուծոյ. ովդիք ՚ի մէջ օտարաց. ովդ ազատք ՚ի մէջ գերեաց և թագաւորք ՚ի մէջ ամբոխին: Ոչ, որպիսի խնարհ և խորին առիթ երախտագիտութեան. բայց որպիսի առարկաւորկայ նոյնպէս և հապատութեան: Որդիութիւնն Աստուծոյ ումանց համու նիւթէ խորին խոնարհաւթեան և ոմանց համար՝ առիթ ամբարտաւանութեան: Երդ, պէտք է ուրեմն, եղաքը իմ, կամ հապարտութիւնը խորասուզէ ՚ի իրու երախտա-

գիսութեան, կամ երախտագիտութիւնն ընկղմել ՚ի խորս ամբարտաւանութեան: Եթէ դուք ձեզ արդրուած որդիք ամբարտաւանութիւն, միայն առանց ձեր արժանաւորութեան շնորհուած պարգեւ, միայն բղորովին ձրի սիրոց պարտաւորից վը կայութիւն: Եթէ դուք միայն այս կերպով կը գնահատէք ձեր որդիական յատկութիւնը, անշուշտ կը լինիք խնարհ և կունենաք այն ամեն շնորհքները, որոց կապն ու գրաւականըն է որդիական յատկութիւնն: Դուք հեզ և խնարհ կը լինիք: Դուք կ'օրհնէք, դուք կ'աղօթէք, դուք կը սիրէք. վասն զի օրհնութիւնն, աղօթքն և սէրն կը սերմանին ՚ի սիրոս հոգւով աղքատաց, որոց միայն կը պատկանին արքայութիւն Աստուծոյ և գանձք, մնչդէս ասաց Տէրն մեր Յիառուս Քըրիատոս: Եղր խնարհ կը լինիք, դուք կ'ունենաք ձեր որդիական ախտավորիչն: Դուք կը լինիք ճշմարտապէս որդիք Աստուծոյ: ձեր հայրն կը ճանաչէ զմեզ և նորս սիրոց և ներկայութեան զգացումն երբէք չը սովորի ձեր սրտէն: Երբ խնարհ կը լինիք, երբէք չէք տարակուսիք և կասկածիք և ձեր հաւատարմութեան վատահութիւնը հաւասար կը լինիք ձեր կամովին խնարհութեան: Խնարհն միայն, որովհետեւ իւր անձին չ'ապաստանիք, միշտ իրաւունք ունի յուսալու: Բայց, աւազ եթէ որդիք ութեան տիստափի մէջ միայն ընկ արտօնութիւնն կը սիրէք: Եթէ կը պարծիք միայն, որ նովաւ ուրիշներէն կ'արոշիք: Եթէ երջանիի կը համարիք զմեզ միայն այնու, որ ընկ ախտազսով ուրիշներէն կը տարբերիք: Եթէ չէք չանար հաւատոց գործքեր ունենալ և անտարբերութեամբ կը դիտէք, երբ

Վատուծոյ հաղարաւոր որդիներ իրենց գերագոյն ախտղըն կ'արհամարեն և առ ոսն կը կոփեն . եթէ նոցա դըժ-բախտութիւնը , փոխանակ տրտմեցընելց զձեղ , գուցէ աւելի կ'ուրախացնէ , եթէ գուք սոյն տիտղոսն կը պարզէր իրեւ դրոշ կուսակցութեն . եթէ գուք աւելի կը բարձրացնէր այն տեսանելի պատու արներն , որք զձեղ ուրիշ մարդիկներէն կ'անջատեն . եթէ դուք ձեր խօսակցութեանց մէջ ձեր որդիական վիճակի պարտուց կատարումն թալլով , լոկ անունը պաշտպանելով կը յամառիք . եթէ գուք տասըն անգամ նախապատիւ չէք համարեր զձեղ խոնարհեցնող և միւս մարդկանց հետ կապող տիտղոսներն՝ այն տիտղոսէն որ զձեղ կը բարձրացնէ և ուրիշներէն կ'որոշէ . միով բանիւ , եթէ ձեր ուրախութիւնն հպարտութեան ուրախութիւնէ և ձեր բարեպաշտութիւնն այլոց վկանաց և անիրաւութեան բարեպաշտութիւն , լսեցէք , որ գուք անուամբ միայն որդի Վատուծոյ էք և ոչ արդեամբք : Խսեցէք և իմացէք , որ գուք մոլորութեան մէջ էք . գուք կը խափէք ձեր անձն . գուք կուրախանոք և կը հըճուիք , ոչ իբրեւ որդի Վատուծոյ , այլ իբրեւ յափշտակիչ այնպիսի անուան , որ երբէք չը պատկանիք ձեզ : Դուք որդիք Վատուծոյ չէք , և բնաւեղած չունիք : Հպարտութիւնն , ուռիթն առաջին անկման մարդոց , վերըստին անկեալ կը թողու զձեղ , թէ և Վատուծ կամեցաւ յոաին կացուցանել : Հպարտութիւնն մի վատթար պահապան և անհաւատարիմ իշխող է այն գանձուն , որ պէտք է ձեզ տրուէր : Հպարտութիւնն կը լափէ նոյն գանձն . նա կրտպառէ , իրենց առաջին բողոքին մէջ , երախտագիտութիւնն , սէրն և աղոթքն :

Հպարտութիւնն ձեռք կը կարկառէ մինչեւ անգամ այն ուրախութեան , որ ձեր նոր հաւատոյ առաջին պատուղն էր : Հպարտութիւնն անդադար կը կրծէ սոյն ուրախութիւնն կասկածանոց և թերահուատութեան ժան նիբներով . վասն զի հպարտութիւնն լի է թափծութեամբ : Մարտակութեամբ և տարակիտանոր , ինչպիս խոնարհութիւնն լի է վստահութեամբ : Հպարտութիւնն երբէք չը յուսար և վստահիր , ոյլ միշտ կը տարակուսի և կ'երկնչի : Հըպարտութիւնն դողումն կը ներշնչէ հոգւցն և սարսափ , ուսուցանելով թողուլ ճշմարիտ ապաւէնն և յանձնապաւէնիլ : Հպարտութիւնն մերթընդ մէրթ մթութեան սոսկափ վայրկեաններ կուտայ մոքին , ՚ի վերջոց խպառ կը խորասուղէ զայն յուսահատութեան խաւար գիշերոյն մէջ :

Իսյց պիտի ասեմք որ , միւս կողմէն եւս Վատուծոյ որդիքն , օտարք ՚ի մէջ աշխարհի , օտարք երթեմն ՚ի մէջ մեր ձուռաց , վարելով այնպիսի կեանք որ զայլ կը վիրաւորէ , վասն զի կը բանցայնէ . որդիքն Վատուծոյ առանձնացեալ ՚ի մէջ ընկերութեան , մենացեալ ՚ի մէջ բազմութեան , որք կը նուիրեն այլոց իրենց սիրազ , բայց ոյլք զայն կը մերժեն և մինչեւ անգամ առելութեան և թըշնամանաց դպացումով կը վառին . վասըն զի նոցա կեանքն ու սկզբունքն իրենց կենաց սկզբանց ներհակ կը տեսնեն . որդիքն Վատուծոյ , որք հազիւ ուրեմն սառն վստահութեան կը հանդիպին մարդկանց կողմէն , բայց ոչ երբէք կը վնասուուին , ոչ կընդունուին ոչ կը գիմաւորուին և ոչ կը սիրուին , նոքա որ միշտ կը սիրեն , նոքա որք զօրացած են Յիսուսիւ ՚Իշխատուիւ , և մարրուած է նորա ձեռքով իրենց սէրն ու յօժարութիւնն : Վայ կողմէն

եւս ահա ուրիշ վորանգ ունին իրենց
առջեւ Աստուծոյ որդիքն , այս կազ-
մէն եւս ուրիշ որոգայթ ունին իրենց
հանգէպ . Ահա կացութիւն , որ երկի-
ցը դժուարին է , վասն զի պէտք է
սոյն փորձանաց մատնել զանձն և
պէտք է միշտ զգալ զայն . Վայ այ-
նըմ՝ որ սաստիկ կզգայ . և վայ այնմ
որ չգգար բնաւին . Այսն մենաւ օրա-
կան վիճակին մէջ , սոյն ընդհանուրէն
մերժման կացութեան մէջ սաստիկ ըդ-
գացումն կը ակարացնէ քրիստոնէա-
կան քաջութիւնն և վտանգի կենթար-
իէ հաւատարմութիւնն . բնականա-
րար ընդ առաջ ելած նախանձն ու
անտարբերութիւնն կը յոգնեցնեն ,
Աստուծոյ որդիքն կ'ենթարկուին ար-
համարու և ցուրտ նայուածքներու .
կարօտութիւն կզգան մարդկային
ընկերակցութեան մէջ մտնելու .
կը խուսափին դժուարին տեսարան-
ներէ , որոց կ'ենթարկէ դաւանու-
թիւնն և յուսոյ խոստովանութիւնն .
Յոյս մի կը ծնանի , իբր թէ կարող
ենք մարդկանց ընկերութեամբ ու-
րախանալ և միմիթարիլ . սէր մի կը
ծնանի ՚ի մէջ մարդկանց ընկերութե-
մէջ մտնելու և նոցա համակերպելու ,
Ո՞հ , կը մտնենք մարդկանց մէջ զգը-
կուած և կսղուստուած նոյն փառա-
ւոր նշաններէն , որք պէտք է փայլէին
իբրեւ ըստ քրիստոնէի տնձին և կե-
նաց վերայ . Այնուհեաեւ մոռացու-
թեան կը մատնուին որդիութեան ա-
նունն ու պարծանքն և հազիւ ուրի-
մին կը յիշուին : Եւ երբ քրիստոն-
եայն այս ցածութեան և նուաստու-
թեան աստիճանը կ'իջանի , այնուհե-
տեւ ճշմարտախօսութիւնն կը կաշ-
կանդուի , իւր սրտի խաղաղութիւնն
կը վրդովի , հոգւոյ փրկութեան ճա-
նապարհը կը փակուի նորա համար .
կը նուտովի նաև և կը թափկանոյ , և ա-

ւաղ , որովհեաեւ ջր կամեցաւ երեւիլ
որուէս որդի Աստուծոյ , այնուհետեւ
խոպան կը դատարի նորա որդիու-
թիւնն :

Մրգ . եղբարբ , վերատին կը կրպէ-
նեմ . վայ սոյն մարդոցն , որ չզգար սոյն
խայթոցն և կը վարժի մենաւոր ասպ-
րիլընդդէմբէմեան ՚ի մէջ մարդ .
կային գերդաստանին : Փափագելի է
որ քրիստոնեայն միշտ զգայ սոյն ցո-
ւըն . փափագելի է որ միշտ տեւէ սոյն
վտակրութիւնն . Երկնաւոր Նոյն
կրափոփէ երկնից մէջ սոյն վիշտն .
բայց աշխարհիս վերայ պէտք է որ
միշտ բաց մնոյ այս վերբն : Խանարհե-
ցէք ամենայն հլութեամբ և ձեր ան-
ձըն Աստուծոյ նուրիբեցէք : Ո՞ի ընաե-
լանաբ երբէք անտարբերութեան և
և սաւնութեան , Ո՞չ ապաքէն մեր
Տէրն և Ո արդապետն միշտ շարժեց
հասարակոց կարելցութիւնն : Ո՞չ
ապաքէն նաեւ թշնամի և հալածիչ
ամբոփին մէջ նորա մարդասեր աչքերն
միշտ բարեկամ մի որսնեցին : Ո՞չ ա-
պաքէն նա միշտ մողավորդասէր եղաւ ,
մողովորդասէր ըստ նմանութեան Աս-
տուծոյ , ընդ առաջ ելաւ տմենուն ,
յինքն յանկոյց զամենեսեան . ողբա-
նօք փարեցաւ ընդ ամենեսին : Ո՞չ ա-
պաքէն կը տեսնեմբ , որ նա երբէք չը
հեռացաւ ամբոփին , ջր խուսեցաւ
տոռապեալներէն . ջրաբողեցաւ մե-
ծամեծներէն և ջր կամեցաւ բնաւ
իւր կտարիլութեամբ , որ անջուշ
գերագոյն է քան զմելին . այնպիսի
գիրք բռնել որ անմատչելի լինի ՚ի
մարդկանէ : Ո՞չ ապաքէն սոյն վերջն
փայրիկենին մէջ ինկ , երբ մարդիկնե-
րէն բռնի անջատուած կը մագլէր ՚ի
լեառն Պողոգոթայ , ՚ի լեառն զոհի ,
շրջապատուած էր . Երուսաղէմի դըմ
տերաց արտասուքներով , կը պատ-
ուիրէր նոցա իրենց և իրենց որդւոց


վերայ արտասուել։ Ո՞չ ապօքէն առ տուածային վոէմինդրութիւնն են թարկուած ժամանակն իսկ, իւր դա հիճներն կը նմանեցընէր տկար ձագերու և տանջանաց վերջին վայրկենին նիքն տակաւին մայր կը հանդիսանար նոցա։ Եշտարք իմ, մինչեւ ՚ի վերջին ճգնաժամն բնաւ մի ցանկոցք մարդիկներէն մենանալ, թէպէտ և դատապարտեն զձեղ հեռանալ և առանձնանալ։ Թաղթ բաժանումն երբէք ձեր գործն չը լինի։ Թող այլք աքուրին զձեղ բայց դուք մի արսուրէք զձեղ։ Թող այլք տարագրին զձեղ, դուք մի տարագրիք իմքնին։ Ո՞ի պարուրիք և մի փակուիք անձնասովականն և եսական խաղաղութեւ մէջ։ Իշէք, խնարհեցէք ձեր փառքէն, բայց երբէք մի ու բանաք զոյն։ Ո՞եղաւորք փրկեալք չնորհօք, խառնուեցէք մեղաւորաց մէջ, առանց նոցա մեղաց ընկերանալու։ Երբէք, բնաւ երբէք, մի լինիք խստափրտ և անկարէկից առ մարդիկ ձեր տպահու վութեան համար։ Թաղթ բրիստոնէութիւնն բնաւ չը հանէ չը տարագրէ զձեղ մարդկութենէն։ այլընդհակառակն այնչափ կատարեալ մարդիկ եղէք, որչափ կատարեալ քրիստոնեայէք։ Հաստատ իմացէք, որդիք Վատուծոյ, որ դուք բովանդակապէս պիտի չը հասկութիք և ճանաչութիք աշխարհի մէջ։ Վագրեալն արդէն ասած է, պատճառն բացատրած եւ և փորձն եւս արդէն ապացուցած է զոյն։ Հաւաաացէք և դուք Վագրելց խօսքին։ բայց մի լինիք բնաւ տգետ և խաւարամիտ, մի լինիք առանց խորագիտութեան, որ երբէք չը պատկանիք բրիստոնէին։ Ո՞ի խառնէք աշխարհային յիմարութիւնն Վաետարանի սուբբ յիմարութիւնն հետ վասն զի այլ է աշխարհի յիմարութիւնն, և այլ է Վաետարանի յիմա-

րութիւնն, որ իմաստութիւն է րովնդակի։ « Օի յիմարն Վատուծոյ իւմաստնագոյն է քան զամենայն մարդիկու։ Ի՞անական եղէք, զիւրամատչելի եղէք ամեն կողմէն, ինչպէս վոյելէ քրիստոնէին։ Վմեն յարակցութիւն և ընկերակցութիւն ունեցէք, ինչ որ կարեցի է ունենալ։ Հաղորդութիւնն ունեցէք ձեր եղէք հաղորդակցութեան։ Ո՞ի թողուք որ երկար անջատումն բառնայ ձեր սրբակէն հաղորդակցութեան և ընկերակցութեան գտացումն։ Օգոյշ կացէք, որ մի գուցէ, սխալմումք ձեր նոր արձանաւորութեան լերան վերայ մենանալով, հարարտութիւնն գոյ գոտէ զձեղ ձեր առանձնութեան մէջ և ՚ի վոյր գահավիմէ զձեղ այն բարձրութենէն, ոչ ՚ի շարս ամբոփին խառնելով, յորմէ դուք հեռացայք, այլ անդք քան զամբոփին ՚ի վայր իջուցնելով։

Ի՞նչ պէտք է առնել սոյն վտանգաց մէջ, յորոց մին միւսոյն մէջ կը ձգէ։ Ի՞նչ պէտք է առնել, եթէ ոչ պաղստել և անդադար Վատուծոյ օդութիւնը խնդրել սոյն փորձութեանց մէջ, որք անընդհատ կը վերածնանին։ Վատուծոյ որդին մեծամեծ արտօնութիւններ և տուաւելութիւններ ունի, բայց ամենէն մեծն է իմանալ պաղատել և խնդրել։ ՚իթէ այս պարգեւն չունի, ինչ կարող են առնել միւսներն։ Վզօթեցէք ուրեմն, որ Վատուծոյ չը նորհքն ձեղ համար չը փոխուի յորոգայիմ ամբարտաւանութեան։ Վզօթեցէք որ չնորհքներն անընդհատ իւրարու յաջորդին և մի զմիւն հաստատեն, ամրացնեն և յարատեւեն։ Վզօթեցէք որ Ճշմարիտ Վատուծոյ որդիք լինիք, հաւատով խնարհ, սկըրով հաստատուն, յուսով անցողդողդ, հեղ և փոքրիկ այն ձեռքին մէջ, որ

որ զժել կը բարձրացնէ և կը մեծացը
նէ . Հաղ և փոշի համբուցէք զժեզ
ոչ մի ոյն ամենափոքրի հաւատացե-
լցն հետ , այ նաև ամենավատ ան-
հաւատին , միով բանիւ , լեռուք ջիւջ
հայելիներ . Առաւեծոյ Միածին Արդ-
ւոյ պատկերին , որ ինքնին կեանք էր ,
և դուք միայն նովաւ կեանք ունիք ,
որ ունէր անուն անհամեմատ քան զո-
մենայն սնուն , և սուխոյն հեղ էր և
խոնարհ սրտիւ և մարդիսնց սիրոյն
համար . Ա անձնունայնացց , զիւր-
պարանս ծառացի առեալ , ՚ի նմանու-
թիւն մարդկան եղեալ և կերպարանոք
գտեալ իրբեւ զմարդո , Փիլ . Բ . 6 :

(Ըստակիլէ)



ԱՆՑՔ ՄԵՇԻՆ ՆԱՓՈԼԻՈՆԻ ԸՆԴ ՆԻԵՄԵՆ ԳԵՏ

Յունիս 23ին դեռ օրը չը ծագած՝
կայսերական զօրախումբը Նիեմենի հա-
սաւ . բայց առանց դայն տեսնելու :
Բրուսական անուսոփի մը եզրը՝ և դե-
տը չը լապատող բլուրները՝ կը ծածկե-
ին այն մեծ բանակը , որ պատրաստ
էր անկից անցնելու :

Նախորդուն՝ որ մինչեւ այն տեղ
կառքով եկած էր՝ առաւուեան ժամը
երկուքին (ըստ Եւրոպացւոց) ձի կը
հեծնայ : Կըսեն թէ առանց ինքը
պինք ծածկելու ձանցաւ ռուսա-
կան ափունքը . բայց ստոցդը սա է որ՝
ասհամագլուխը անցնելու համար
գիշերուան խաւարով ծածկուեցաւ .
Բնագէս հինգ ամիս ետքն ալ նոյն խա-
ւարի շնորհիւ միայն նոյն տեղէն վե-
րադարձաւ : Այս եղերքին լեռաց ե-
րեւցած միջոցին՝ յանկարծ ձին գլորե-
ցաւ . և դինքը ձգեց դետի եղերքին

վրայ : Զայն մը լսուեցաւ , որ գոչեց ,
“ Զարագուշակ է այս . հռոմայեցի մը
ըլլար՝ և ա կը դառնարու : Յայսնի չէ
թէ լսաղը Բնիքն էր , թէ հետը եղող
ներէն մէ կը :

Զնաւեթի նը կատարուեցաւ , հը-
րամցեց որ՝ երկրորդ օրուան խոնար-
հելու ժամանակը Բնիքեմեն գիւղին
մօտ գետին վրայ երեք կամուրջներ
ձգուին . յետոյ իւր բանակալոյրը քա-
շուեցաւ , ուր անցուց այս ամբողջ օ-
րը մերթ իւր վրանին տակ . մերթ բո-
լնեան տան մը մէջ , դժողովակ տաքու-
թեան մը ներքեւ բոլորովին անշարժ
և ուժաթափ տորածուած , և ՚ի զուր
հանգիստ ինդրելով :

Երբ գիշերը հասաւ , գետին մեր-
ձեցաւ , որուն վրայէն նաւակով մը
քանի մը խրամահատներ անցան : Ա ի
զարմացմամբ և անարդել ռուսական
ափանց վրայ ուղբ կոխեցին : Հնի խա-
ղաղութիւն գտան . ողատերազմը մի-
այն իրենց կողմէն էր . ամենայն ինչ
խաղող էր այս օտար երկրին վրայ ,
որ այնչափ սպառնալից նկարագրուած
էր իրենց : Սակայն գիշերսպահ խում-
բի մը հրամանատար Գաղորդ պարզ
պաշտօնակալ մը իսկոյն ներկայացաւ
անոնց : Ասիկա առանձնակի էր . ինքը
բոլորովին անվրդով խաղաղութեան
մէջ կերեւէր , և չէր գիտեր որ՝ ամ-
բողջ զինեալ Եւրոպան իւր գէմն
էր : Կը հարցյնէ այս օտարասկանաց թէ
ով են իրենք . և անոնք կը սրատասիս-
նեն . “ Գաղղիացի ենք : – Բնիք կու-
ղէք . կը հարցյնէ գարձեալ պաշտօնա-
կալն , և ինչու Ռուսաստան եկած էր :
“ Յանկարծ խրամահատ մը շտապաւ
կը պատասխանէ . Զեղ դէմ պատե-
րազմելու , Վիլնան առնելու , Բոլոնի-
ան ազատելուո : Այս խօսքերուն վե-
րաց Գաղղիաքը եւ կը քաշուի , և անե-
րեւոյթ կը լսայ անտառներու մէջ , դէպ

Կ զբար մեր դինուասրներէն երեքը ան-
զուազ եռանդավալ մը՝ իրը թէ անստո-
ռը զննելու համար իրնոց հրազդննե-
րը կը պարագին :

Այսպէս հրազդնոց երեք հար-
ռաւածներուն տիկար ձայնը, որ անպա-
տասխանի մնաց, իմացուց մեղ թէ
թէ նոր պատերազմական դաշտ մը կը
բայցուէր, և թէ մեծ արշաւանք մը
սկսուած էր :

Իցէ թէ առ խոհեմութեան կամ
առ կանխազգածութեան կայսրը շատ
զարմացաւ պատերազմի այս առաջին
նշանին վերաց : Խսկոյն երեք հարիւր
տաղարաւորներ (վօլթիմէօր) գետը
անցան, կամուրջներուն կազմութեա-
նը հսկելու համար :

Մէր առաջն էր ռուսական սահ-
մանագլուխը : Արդէն իսկ մեր անյագտ
նայտածները ստուերներու մէջն ՚ի
փառու մեղ խոստացեալ այս երկիրը
յափշտակել կը ճգնէին : Կարծես ՚ի
մերձնեալ ազատչաց լսելի կը լլայնն
կուդանացւոց ուրախութեան աղօ-
ղակները : Սոյն գետը անսաց աղեր-
սարկու ձեռքերէն շրջապ ստուած կէ-
րեւակայէինք : Հոս ամեն բան մեզի
կը պակսէր . հան ամեն առասութը
մեղ պիտի ընուինք : Անոնք մեր պէտ-
քերը հոգալու պիտի փութային . քիչ
մը ետքը և զմ'զ պիտի ողջագուրէին
սիրով և երախտագիտութեամբ : Գի-
շեր մը ձախողակի եղաւ . բայց ինչ
հոգ : Օրը վերածներու մօտ էր, իւր
ջերմութեամբը և ամեն հրապոցներով:

Օրը երեւեցաւ, ուրիշ բան ըներկա-
յացնելով մեր աչքին, բայց միայն ան-
ջրդի և անդնակ աւազուաններ, և մը-
թին ու ախրատեսիլ անստառներ : Այն
ատեն թաղծութեամբ մեր հայեց-
ուածքը մեր վրայ դարձուցինք : Յու-
սոյ և պարծանաց զգացումը վերստին
մեղ գրաւեց ՚ի տես համախումք ա-

հարիւր բանակիս :

Գետաէն երեք հարիւր քայլ անդին
բարձրագցն դիրքին վրայ կայսէր բա-
նակը կը տեսնուէր : Եւ շուրջանակի
բլուրներու, դարեւանդներու և ձո-
րերու երեսը մարդիկներով և ձիերով
ծածկուած էր : Երբ երկիլը կը ներ-
կայացնէր արեգական այս փայլուն
պատեսաղէն կրցները, նշանը տրուե-
ցաւ . և խակոյն բազմութիւնը սկսաւ
եռաձիւղ գէպ ՚ի երեք կամուրջները
հոսել : Զիրենք Նիւմենէն զատող
փոքր դաշտավայրը իջնալու ատեն
կը տեսնուէր որ օձապայտ կը գալա-
րէին, գէտին կը մօտենային, երեք
անցքերը կը գրաւէին, կ'երկարէին
և կ'ամփափուէին կամուրջները անց-
նելու . և վերջապէս ոտք կը կոփէին
այն օտար երկիլը, զօր ՚ի մօտոց պիտի
քանդէին, և զոր՝ իրենց բազմափիւռ
բեկորներով պիտի ծածկէին, Այնչափ
մեծ էր եռանդը՝ որ երկու յառաջա-
պահ զօրաբաժնիք անցնելու մէջ աւ-
ռաջնորդութեան պատառոյն համար
մրցեցան, և գուցէ ձեռք ձեռքի ալ-
տային, եթէ զանննք խաղաղելու փոյթ
քլլայր : Նախողէօն փութաց կիխել
ռուսական հողը : Անվեհէր այս առա-
ջին բայցն էր գէպ ՚ի իւր կորուսոր .
Նախ կամուրջն մօտ կեցաւ հայեց-
ուածքով զօրականը սրտապնդելու : Ա-
մենքն ալ զինքը ողջուն եցն իւրեանց
սովորական աղաղակներով : Անոնք իր-
մէ աւելի եռանդուն կ'երեւէին . գու-
ցէ կզգար նա թէ իւր սրտին վրայ կը
ծանրանար այնչափ մեծ արշաւանք մը .
գուցէ իւր ակարացած մարմինը տա-
րապայման տաքութեան մը չէր զօրեր .
կամ յաղթահարելու առարկայ մը չը
գտնելուն ՚ի վարանս էր :

Վերջապէս անհամբերութիւնը
զինքը պաշարեց : Յանկարծ երկրին
գէտ ՚ի ներսէրը խորամուխ եզաւ գէ-

ար շրջադատող անտառին մէջ։ Իւր ձիուն բոլոր արագութեամբը կը վս պէք, իւր խռովապին մէջ կարծես թէ կ'ուզէր միայն սկզ թշնամիին համնիլ։ Այս ուզութեամբ մէկ մղնեն աւելի տեղ գնաց, միշտ մի և նոյն աւանձնութեան մէջ, յետ որոյ հարկ եղաւ վերադառնալ կամուրջներուն քով, ու ակից վերասովն իջաւ գետին ընթացքին ուզութեամբ և իւր պահակներով դէպ ՚ի Քօյնօ։

Գորչես թնթանօթի գոռու մը լըս աելի կըլլար։ Մենք մեր ընթացքին մէջ ուշագրութիւն կընէինք թէ պատերազմը որ կողմէն կրակէր։ Բայց նոյն օրը հօն, ինչպէս նաև հետեւեալ օրը, բաց ՚ի Գաղաքի քանի մը խում բերէ երկինք մեզ թշնամի կ'երեւէր։ Արդարեւ, հազիւթէ կայորը գետէն անցած էր, որ շնչիւն մը օդը յուզեց։ Յանկարծ օրը մէջնեցաւ, հողմը բարձրացաւ, և կ'այծակի աղէտարեր որոտումները մեզ հասոց։ Այդ սպառնալից երկինքը, այդ անսպասուան երկիրը զմել տիսրեցցց, Ամանք իսկ, երեւու սպանչացողը, այժմ՝ այս երեւոյթէն սոսկացին իրեւեւ գումէկանէ մը։ Կ'սրծեցին թէ այս բորբոքնալ ամսերը մեր գլխուն վրայ կը կուռառէ կէին, և երկրիս վրայ կը խանարհէին մեր մուսաք խափանելու համար։

Ճշմարիտ է որ փաթորիկը ձեռնարկին պէս մէծ եղաւ։ Երկար ատեն սոսւար և նսեմ ամսկերը կը թանձրանային և կը ծանրանային ամբողջ բանակին վրայ աջէն դէպ ՚ի ձախ և մինչ չեւ յիսուն փարսախ տարածութեան վրայ։ բանակը բոլորովին ահարեկած էր անոր կրակներէն և ընկճած անոր հեղեղներէն։ Ճանապարհները և դաշտերը ուղղեցաւ։ օդի ջերմութիւնը մէկէն ՚ի մէկ դժնդակ յուրափ մը փոխուեցաւ։ Տասը հազար ձի կոտոր-

ուեցան ճանապարհի վրայ, մանաւանդ հետեւեալ կայաններուն մէջ։ Եստ պատերազմական կահեր աւազուաններուն մէջ մնացին։ յետ որոյ շատ մարդիկ ալ մեռան։

Այս փաթորիկին առ աջնին կատազութեանը դէմ վանք մը կայսեր աւագաստ մեռա սն եղաւ։ Խոկցն մեկնեցաւ անկից Քօյնօ երթալու համար, ուր մէծագոյն անկ սրդութիւնը կը տիրէր։ Կ'այծակի հարուածներու շառաջներ այլ եւս լսէլի չէր ըլլոր, այն ահարկու դղոդիւնները, որ դեռեւս մեր գլխուն վերայ կորոսային, կարծես թէ մոռցուեցան, որովհետեւ եղանակիս մէջ սովորական եղող օդերեւոցմը թէպէտ և ոմանք վսիսուց, բայց ընդհանրապէս գուշակութեանց ժամանակն անցած է։

Ակեպտականութիւն մը, առ ոմանըս հանձնարեղ, և առ այլս անփոյթ երիւա, երկրային կիրքեր, անդիմադրելի կարիք, հեռացուցին մարդու հոգին այն երկնքէն, ուսպից եկաւ և ուր պիսի վերադառնայ։ Արդ այս մէծ աղէտից մէջ բանակը ուրիշ բան ընկատեց, բայց միայն բնական դէպք մը, և զոր այտպիսի մէծ արշաւանքի արգելման ազդ մը նշմարելէն բոլորովին հեռի, որուն համար ինքը (թէպէտեւ պատախանատու ալ չէր) ընդուած հօն՝ եթէ ոչ բարկութեան առիթ մը ընդդէմ բախսի կամ երկնից։ որ ըստ դիպայ կամ այլ օրինակ իրեն այսպիսի սոսկալի նշմարանքներ ցոց կուտար։

Նոյն օրը մասնաւոր դժբաղդութիւն՝ ալ ընդհանուր աղէտից վրայ աւելցաւ։ Յայնկոյս Քօյնօյին Նափոլեօն կը զայրանայ Վիլնայի (գետ) դէմ, որոյ կամուրջը Գաղաքները կործանած էին։ որով Ուտինօյի (գորապետ) անցքը կարգիլուէր։ Նափոլեօն զայն ար-

համարհել կը կեղծէ , ինչպէս այն աւ
մն բաները որոնք իրեն խոշընդուռ
կըլլացին . և կը հրամայէ իր թիկիառ
պահ Բոլնեան զօրաբամնի մը ինքզին
քը նոյն գետը նետել : Այս այրընտիր
քանչըրը անվեհեր նետուեցան ալեաց
մէջ : Նախ կարգաւ յառաջացան .
այց խորութիւնը չէր ներէր ալ որ
հունէն անցնին՝ ջանքերնին կրկնապատ
կեցին : Խսկոյն լոզալով գետին մէջ տե-
ղը հասան : Բայց հօն արագագոյն յոր-
ձանքը զիրենք ցրուեց : Այն ատեն ի-
րենց ձիերը խրուցեցան , խոտորեցան , և
ջոց բռնութենէն մղուեցան : Այլ ես
չին լողար , այլ ցիրուցան կը ծփային :
Անոնց հեծեալները ՚ի զուր կը մրցէին
և կը ջանային . այլ ուժամժափ են .
վերջուպէս բախտին անձնատուր եղան
Անոնց կրուսար հաւաստի էր . բայց
իրենց հայրենեացը համար էր և անոր
ակներեւ և իրենց ազատչին համար ,
որուն անձնանուէր եղան . և մերձ լն-
կրղման ձիգերնին վայր մը դադրեցը-
նելով գլուխնին գէպ ՚ի Նափոլեօն կը
դարձունեն և կ'աղաղակեն “ Կէցէ-
խոյ : ” Մանաւանդ երեք հոգի նշմա-
րուեցան , որք բերաննին տակաւին
ջուրէն վեր բռնած՝ մի և նոյն աղաղակը
կրկնեցին , և խսկոյն անհետ եղան : Ահ
ու զարմանք բանսկը պաշորեց :

Խսկ Նափոլեօն հրամայեց փու-
թով և ամենայն ձշութեամբ որ՝
կարելի եղածին շափ մարդ ազատելու
միջացները ՚ի գործ դրուին . բայց ա-
մենեւին յուզեալ չէր երեւէր . իցէ
թէ ինքզինք զապելու վարժ էր . իցէ
թէ պատերազմի ատեն սրտի գործ
վանքը տկարութիւն կը համարէր , ո-
րուն պէտք չէր ինքը օրինակ տար ,
և զոր յաղթել հարկ էր , և կամ որ ա-
ւելին է մեծագոյն արկածներ կը նա-
խսաւէր , որոնց առջեւ ներկայա ոչ
ինչ էր :

ՈՒԽՏԱԽՈՐՈՒԹԻՒՆ

Ու խտւորութեան սկզբնաւորու-
թիւնը շատ հին է , հեթանոսական
դարերու մէջ եւս եղած է , այնպէս որ
կարող եմք ասէլ թէ ազգաց հետ
ճնած է և նոյն բնութիւն դարձած :

Ու խտւորութիւնը աստուած-
ուաշտական բարեպաշտ զգացմանց
հետ սերտ համակերպութիւն ունի
և հետեւաբար քրիստոնէութեան մէջ
մեծ նշանակութիւն . վասն զի երբ
քրիստոնէոյ ժողովուրդ մը յանուն
նահատակի կամ մարտիրոսի մը հիմ
նուած եկեղեցի կամ վանք մը ուխտի
կերթայ , անշուշտ նոյն նահատակի
կեանքը նորա բարեպաշտական զգաց-
մանց վերայ մեծ ներգործութիւն ը-
րած են , և բնականաբար կերթայ
նորա շիրմին վերայ ուխտել Վատու-
ծոյ մարտիրոսական կեանք մը . խընդ-
րել Ապառւծոյ այն սուրբ օգնու-
թիւնը , որով շատ սուրբեր , շատ նա-
հատակներ և մարտիրոսներ կարողե-
ցան ունենալ ՚ի սէր աստուածու-
թեան , ՚ի սէր կրօնի և ձշմարտու-
թեան այնպիսի կեանք մը , որոյ վերայ
ժամանակը և շկեղեցական Պատմու-
թիւնը պանչացած են :

Աթէ կենաց նմանողութեան այս
սուրբ իզէը ըլլինէր ազգաց մէջ . հա-
մարձակ կասեմք , որ այսօր Հայաս-
տանեայց եկեղեցին ը պիտի ունենար
իւր միակ պարծանքն եղող խաւարի
գէմ ունեցած անթիւ պատերազմնե-
րըն և ոչ անհամար նահատակներն և
մարտիրոսներն , որոց արեամբ ող-
ջոյն աշխարհ մը կ'ոռոգէր : Ուրեմն
ուխտաւորութիւնը սնունդ մ' է ,
որ կրօնասիրութիւնը կենդանի կը պա-
հէ . կայծ մ' է , որ բարեպաշտական
զգացմանցները կը բոցավառէ : Օ այս
մեր երանելի նախնիք շատ լաւ զգա-

ցած էին, և այս խել էր պատճառը, որ նոցա ժամանակ աւելի յաճախ էր ուխտադրութիւնը և ուխտատեղիներըն աւելի շատ . ինչպէս Աեպուհ լեառն և այլ տեղեր, ուր ամեն տարի իւրաքանչիւրին տօնի օրերը հազարաւոր հայեր կը համախմբէին :

Չեմք ասեր այլոց, որովհետեւ կարող չեմք այլոց զգացմունքներն քըննել, գոնէ մեզ համար շատ նույիսական էն և նախկին ուխտաւորական համախմբութեանց լոկ յիշատակն անգամ վսեմ տպաւորութիւններ կ'ազգէ մեր օրոտին : Ի սրտէ կը յաւիմք, որ այսօր բոլորովին մեր մէջ ազգային նշանաւոր ուխտաւորական համախմբութիւններն դադրած են . այսինքն ըունիսք յանուն Վարդանանց կրօնասէր և հայրենասէր նահատակաց, Եերախի, Աահակայ : Ուսովլ պայ և այլ ճշմարիս և ազգասէր հայրապէտաց ազգային տօնակատարութեան համախմբութիւնք, ուր տօրուէ ասարի Հայ ժողովաւրդը խմբէր նոցա յիշատակաւ, նոցա արդեամբ նուիրագործեալ անդերու մէջ և յուշ ածելով նոցա կեանքն ուր արարքը՝ աշխատական օրինակին հետեւելու : Կը հաւատամիք մէք, որ եթէ այսօր մեր Վզգին մէջ այսպիսի ուխտաւորութիւնք լինէին, Վզգը աւելի կենդանի, աւելի կրօնասէր, ազատասէր և հայրենասէր պիտի լինէր.քան թէ այժմ :

Արշափ որ յաւալի է այս կետը, կայ և սորոս հակառակ միսիթարականը, այն է Յըրուսաղէմի և մի քանի տեղերու Հայ ուխտաւորութիւնը : Յըրուսաղէմը քրիստոնէական եկեղեցւոյ հիմնարկութենէն ՚ի մեր ընդհանուր քրիստոնէութեան նկատմամբ մէծ նշանակութիւն ունի. այս պատճառ Յըրուսաղէմի ուխտաւորութիւ-

նը միայն Հայ ուխտաւորութիւն չէ, այլընդ հանուր քրիստոնէական ուխտաւորութիւն : ՚Իսյն խել լուսաւորեալ և ազատամիտ Յըրուսաղիք և Վմերիկացիք, որոց համար կը կարծեմք թէ այսպիսի կեաերը նշանակութիւն ըւնին . սակայն ընդհակառակին մեք կը տեսնեմք, որ Յըրուսաղի և Վմերիկացի ուխտաւորը անպակաս էն Յըրուսաղէմէն . մանաւանդ ներկայ տարւոյս մէջ մեծ բազմութեամբ կը յաճախին :

Յըրուսաղէմի հայ ուխտաւորութիւնն օգուտը կրինակի է, այն է հոգեւոր և ազգային . արդէն չեմք կարծեր, որ մէկը ուրանայ հոգեւոր օգուտը եւ վերջնն եւս մեք միշտ մեր աչքով կը տեսնեմք և որ մեծ նշանակութիւն ունի մեր ազգի համար, որ իւր հայրենի երկրէն մէծ մասամբ ցիր և ցան եղած է աշխարհիս վերայ, մոռցած է և հետզհատէ կը մոռնայ իւր մայրենի լեզուն, կորսնցուցած է իւր ազգային սովորութիւններն և գեղեցիկ յատկութիւններն : Վզգաին այս ամեն աղէիսարչ ազէաններն ամոքելու և շափուորելու միջոց մ' է Յըրուսաղէմի հայ ուխտաւորութիւնը . վասն զի այլ և այլ երկիններէ ժողոված հայ ուխտաւորաց խուռան բազմութիւնը մի խանդաղատելի և օրտառուչ տեսարան կը ներկայացնէ . ուխտաւորը որ եթէ Յըրուսաղէմ ըլ գային, բնաւղիրեար ըլ պիտի տեսնային, ոչ ճանաչին և իմանային թէ այս ինչ երկիրը հայ կը բնակի . գոնէ Յըրուսաղէմի մէջ տեսնուելով իրենց ազգային եղբայրութեան կապերն կը վերանորոգին . իրարու զգացմանց կը ծանօթանան . մէկն իւր ուրախաւորութիւնը, միւս մը իւր ցաւն ուր վիշտը կը յայտնեն . մէրթ զիրեար կը բազալերեն, մէրթ կը միսիթարեն և կը յուսագրեն . մի-

Ապատմեն իրենց երկրին ու պահպանին հանգամանքներն և սովորութեաններն . կը ծանօթանան վերջապէս մի մեանց կացութեան և այս կարճ մի ջողին մէջ այնչափ կը զօրանան արեն սկան և եղբայրական յարակցութիւններն , որ մինչեւ անդամ արտասուելով կը բաժնուին իրարմէ . թէ և այս ամենը առ ժամանակեայ են . սակայն մէք համոզուած եմք , որ հայ ուխտաւոք Երուսաղէմէն բոլորովին դատարկ չեն վերադառնար իրենց հայրենիքը , այլ իրենց հետ կը տանին ազգայինութեան քաղցր յիշատակ մը , որ միշտ վառ և կենդանի կը մնայ իւրաքանչիւրի սրտին մէջ : Եհաւասիկ ազգային օգուտ մը , զոր կարելի չէր ուրիշ կերպով ձեռք բերել :

Դալով հոգեւոր օգտին , կասեմք , որ այս եւս ակներեւ է . ամեն ոք ըստ իւր բաղձանաց և չերմեռանդ բարեպաշտութեան տեսնելով աչօք ամեն տնօրինական տեղիքը՝ Եւետարանի պատմական ոգին օրոշ և մեկին կերպիւ կուսանի և որով հաստատուն և ամուր կապերով կը կապուի Եւետարանի ճշմարտութեանց և վորդապետութեանց հետ . աւելի կրակի սրտով և ճշմարտապէս պաշտել քրիստոնէութիւնը , քան թէ զթամք և արտաքին ձեւերով :

Ուխտաւորութիւնը իւր այս օգուտներովը մտածելով՝ ամեն մարդոց պարտաւորութիւնն է առաւել եւս լրւսաւորել և կենդանի գործել քան թէ նսեմացնել և դիակնացնել :

Երանի՛ թէ ժողովրդեան բարեպաշտութեան համեմատ տեղւոյս զանազան ազգաց Միաբանութիւնքն եւս միմեանց հետ քրիստոնէական և եղբայրական անկեղծ և սուրբ սիրով կապուէին և իրենց կենաց կենդանի ունինակով առաջնորդութեան առաւել եւս ժողովրդեան

ջերմեռանգութիւնը և բարեպաշտութիւնը զարգացնէին . քան թէ անհաշտ ատելութեամբ , ընդդէմ Եւետարանի խաղաղութեան ոգւյն , ընդդէմ աստուածային և մարդկային օրինաց , անխիղճ յափշտակութեամբ և իրաւանց բռնաբարութեամբ միշտ ժողովրդեան խիղճն ու բարեպաշտութիւնը գայթակեցնէին : Երանի՛ . հազար երանի՛ . եթէ այս ամեն անտի քրիստոնէական մոլորութեանց փոխանակ՝ Եւետարանի ոգին տիրեր ամենու սրտին վերայ , որով անշուշտ պիտի անհետանային գայթակղական և սրբապղծական յափշտակութիւնք և աւարք :

Չը մոռանամք ասել , որ այս տարի Եմեն . Արբազան Պատրիարք հայրը նկատելով որ կարելի է հայ ուխտաւորութիւնը ուրիշ կերպով ևս օգտակար առնել որոշեց որ շաբաթը երկու օր անխափան լրժ , Վարդապետ հարք քարոզ խօսին եկեղեցւոյ մէջ , նոյնպէս Ա . Եմուսոյ Ուսումնական Խորհսւրդն եւս որոշեց , որ վարժարանի ուսուցիչներն շաբաթը մի օր այն է կիւրակի օրերը դասախոսեն , ամեն կիւրակի երկու դաս : Դասախոսութեան առարկայք էին Եւետարանի պատմութիւն , Եկեղեցական պատմութիւն , Քրիստոնէական ու Բարյախասութիւն :

Ո՞ք այս մասին մեր կողմէն ուրիշ բան չեմք ասեր , այլ այս միայն , որ ամբողջ միաբանութեան միակ միսի թարութիւն պիտի լինի , եթէ ուխտաւոր եղանակ ըստ բաւականին շահուած են թէ քարազութիւններէն և թէ դասախոսութիւններէն :

Գ . Ս . Խ .

Արեկայ տարւոցս ուխտաւորաց
Աշ Տփիմառ վլճակի Նամշադինու
գաւտուակի Ճամբարակ գիւղի քահա-
նայ Արժ . Տ . Վարտիրոսն Սարգ-
սեանց ուխտաւորութեան գալով ՚ի
Սուրբ Տեղիս աջմատասիրած է հե-
տեւեալ երգն , և յանձնելով խմբագ-
րութեանս խնդրած է տպագրել . Յի
շեալ քահանային խնդիրն ըլ մերժելու
համար կը հրատարակեմք ահա Սիօնի

մէջ նորա երգն , ոչ իրեւ նշանաւոր
ինչ բանաստեղծութիւն , այլ իրեւ
պարզ թարգման գիւղական քահանայի
բարեպաշտական զգացման . Արժ .
երգասայն քանի մի երգեր եւս յանձ
նեց հրատարակելու , բայց գովեստ
ներ լինելով Ա . Աթոռոցս կացութեան
և միաբանութեան նմատմամբ , ըստ հա-
մեցանք հրատարակել .

ԵՐԳԻ ՎԵՐԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Ի Տ . ՄԱՐՏԻՐՈՍ ՔԱՀԱՆԱՑԻ

1 Երուսաղէմ , Երուսաղէմ ,
Արժան տե՛ս տա՛ր , որբան սաղեմ .
Յայտնի է տնանկ եմ , տոկցս կաղեմ
Տուր զօրութիւն որ այժմ մեղքսի քաղեմ .
Յղացած եմ մեղք , փուձ ծաղկած բաղեմ
Զը թառամի հոգիս , միտրս ըլ շաղեմ
Որբան որ չեմ շաղել , տա՛ր Երուսաղէմ .

2 Ո՛վ Տեառնելը այր և սուրբ Գլխադիր
Հայցելով խնդրեցիր , մեր Տիրովն ասիր
Ռվ ինձ մօտ քեզ խնդրէ , Տէր , տուն ունկն դիր
Դիրօք պանդոկի եմ , մեղ փութով հասիր
Սուրբ աջդ գլխուս դիր , ասա զօրացիր .
Եկեալն արտաքս չեմ հանիլ , ասիր ,

Նման անառակին տա՛ր Երուսաղէմ :
3 Արդեօք Ե՞րբ կը լինի համնիմ Գողգոթայ
Նիրին Ս. Դամայ , որբոցն Գագաթայ
Դաղարու յարութեանն և քեռն Վարթայ
Ծննդեան Բէթլէհէմի և հայր Յովեփիայ
Գնալն Հայ Հայ բաղէն , տեսնելն փառք ա
Եւ զղայ իւր մեղքից , մեղայ կը կարդայ
Իբր աւազակին տա՛ր , Երուսաղէմ .

4 Վարդ սէտք է ընախանձի այլոց վաստակին ,
Պարտի ականչ դնել սրբոց կտակին .
Զարչարել իւր անձն , հասնել նպատակին ,
Փութով կընկերանայ մեծ նահատակին ,
Երբ դառնամք մեր մեղքից իբր աւազակին
Նուտով կ'արժանանամք սրբոց պատակին .

Մեղ էլ արժանի տես նոցա խմբակին .

Տէր, դու ես լցո ու ճար, տա՛ր Երուսաղէմ :

5 Գոհութիւն քեզ, Տէր Յիսուս, ովք բերիր սուրբ Երուսաղէմ
Սրտիս մէջն խոց չը մնաց, աչօք տեսի որքան սաղ եմ
Զարչարանացդ նայելով, լամ արտասուք մաղ եմ
Ո՛վ սուրբ Յակոբ, զիս միսիթարեա շուտուց եմյայտնել, ես կաղ եմ,
Գոլաբանելուդ թիւ չեմ ճարում, խնայիր խելքս չը շաղեմ,
Մարմնով աստից փափագս առայ, մեր տսւնը տա՛ր
Երուսաղէմ :

ԵՂԵՍԻԱ

Եղեսից Կրօնական, Քաղաքական, Աւագական, Աւագական և Թաղական ժողովոց աւտենապետաց և ատենադպրաց նոյնագիր ստորագրութեամբ անթուական և պաշտօնական կնիք չը կրող նամակ մը եկած էր Արքազան պատրիարքին, ու բով անցեալ տարւոց Դեկտեմբեր ամս սոյ Սիօնի մէջ հրատարակուած նամակի մը դէմ կը բողըքեն . սոյն բողըքոյ նամակն ստորագրած էր նոյնպէս տեղւոյն Խտարէի ժողովոց հայ անդամն . Հարկ չը համարեցինք նամակն հրատարակել նախ՝ այն պատճառաւ, որ անվաւերական կերպարանք ունէր, երկրորդ՝ որ ուղղակի Սիօնի խմբագրութեան ուղղուած չէր :

Սակայն կը զարմանամք, որ մինչ դեռ Սիօնի նամակագիրը իւր ըրած դիտողութեանց և յայտնած ցաւալի իրողութեանց ստուգութեան վերայ ամենեւին անկասկած յայտնի ստորագրութիւն կը դնէ իւր գրածին տակ . խակ նամակագիր ատենապետք և ատենադպիրք առանց հրատարակուած նամակին պարունակութեան պատասխանելու, ուղղակի Սիօնի դէմ կը յարձակին, որ իբրեւ, անիօն պապականի մը սուպ սուպ սուպ կը հրաւիրեմք, որ կարդան Սիօնը առանց կրիքի և մեծ ուշադրութիք, եթէ ունին պատասխան մը թող ղըրկեն մէզ, բայց ոչ անձնական կնքով և ոչ նոյնագիր ստորագրութեամբ, այլ պաշտօնական կնիքներով և յատուկ ստորագրութեամբ :

Մէք այս մասին կը հրաւիրեմք նամակագիրներն, որ Սիօնի նոյն համարն կրկին անգամ կարդան ուշի ուշով և մանաւանդ յաջորդ ամսատետրի մէջ չը շարունակութիւնը, (զոր կարծեմք բնաւ տեսած չեն) . եթէ նոցա մէջ իրօք սուպ և խորտակ խոսքեր կան, սրտութեանց մի առ մի պատասխանեն, զոր Սիօն գոհութեակութեամբ պիտի հրատարակէ իս սէր ճշմարտութեան :

Մինչդեռ Սիօնի նամակագիրը Արեւեսն Յակոբ վարժապետը չը գովելէն զատ, նորա ազգամիաս արարքներն պարսաւած էր . սակայն նամակագիր ատենապետք և ատենադպիրք այնչափ կրիք կարդացած են Սիօնը՝ որ բնաւ չեն հասկացած և կրից մարգարէութեամբ գուշակած են, որ Սիօնի նամակագիրը կամ Արեւեսնէ և կամ նորա նման չարճճի անչ մը : Ուստի կրկին կը հրաւիրեմք, որ կարդան Սիօնը առանց կրիքի և մեծ ուշադրութիք, եթէ ունին պատասխան մը թող ղըրկեն մէզ, բայց ոչ անձնական կնքով և ոչ նոյնագիր ստորագրութեամբ, այլ պաշտօնական կնիքներով և յատուկ ստորագրութեամբ :

Մէք արդէն Սիօնի նամակագրի գըրածէն առաջ Ուլնեցի Դաւիթ վարդապետի մասին Պօլսոյ լրագրաց մէջ շատ ցաւալի լուրեր կարդացած էինք . կը ցաւեինք Դաւիթ վարդապետի

բռնած ընթացից վերայ և աւելի մեր	՚ի զգաստութիւն Դաւիթ վարդապէտին և իւր նմանեաց :
սրտի ցաւէն շարժեալ հրատարակե-	
ցինք միշեալ նամակն յուղղութիւն և	

Հ Ե Ք Պ Ա Ն Դ Ո Ւ Խ Տ Ն

Ուր հէք պանդուխտն կարէ գտնել թախճեալ որտին խուն մ' սփսփանք Անդ՝ ուր եղբարց յիւր լսելիս հնչեն սիրոց բիւր արձագանք .

Ուր պանդխախն քաղցրը թուի անագորոցն մահ տարաժամ .

Անդ՝ ուր խփեն նորա աշեր իւր սիրելիք , կամ բարեկամ :

Երբ հէք պանդուխտն նատի կուլոյ իւր չարաղետ դիպաց վերայ Երջանիկ ոք կը զարմանայ և հարցանէ թէ էր կուլոյ .

Երբ պատճառը կը բացատրեն , մեծ ապշութեամք կը գոչէ նա Ճշմարբտ է , այդքան խիստ է ՚ի հայրենեաց գոլ տարակայ :

Ապող. մարդ ոք որ զգացմունք չունի երեք իւր հայրենեաց Նա չէ ՚ի շարը մարդկային , այն զգայուն վեհ էակաց . Նա յարաժամէ ենթակայ նոցա արժան նախատանաց Կ'ատէ զանի , ապահով եմ , և ամենուս մեր Հայրն Աստուած :

Թող պանդխախն առջեւ դիզեն ոտի , արծաթ և շատ ակունք Թող ամեն ոք զայն հրաւիրեն յուրախութիւն և զեղիս կոչունք . Սակայն ՚ի զուր անտարակոյս կը լինին այս ամեն ճգունք Նորա աշեր միշտ արտասուաց պիտի լինին աղքերակունք :

Տղայ էի երբ մեկնեցայ ես իմ վայրէս ծննդական Շասք ինձ ըսին թէ չես կարող ժուժել վշտաց պանդխախական . Պատանի դու , եթէ կամիս քու բուն բարիբդ և խակական Ապրէ միշտ հնո՞ , ուր դու ծնար , Հայ ես , ապրէ ՚ի Հայաստան :

Այս խօսքերըն էին խրատ Ճշմարտապէս ինձ փրկարար Սակայն անոնց զօրութիւնն իմանալու չունէի կար . Այժմ աւանդ , փորձով գիտաց թէ աշխարհիս ամենայն այր Երջանիկ չէ , բայց միայն անդ . զոր ծննդեան կոչեմք սուրբ վոյր :

Ո՞ր բարեգութ ան ազատիչ պիտ՝ կարկառի ինձ , [Աստուած իմ Ո՞ր ձայն պիտի յիմ լսելիս հնչէ մեկին թէ ազատ եմ . Սրանալ թռչել ՚ի Հայրենիս , ում անձիայրեաց կը փափագիմ Հայրենիք , ո՞հ , որբան վաղուց քո սուրբ հրովի կը տողորիմ :

ՀԱՄԱՌՈՅ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ըս. Պ. Գ. Ա. Կը գրէք մեզ թէ
Վզմամարայ կաթողիկոսութեան խըն
զիդն վերստին յերեւան ելած է ու
մաքերն կը յուղէ , և կառաջարկէք ,
որ լուրջ խորհրդածութեամբ մեր կար-
ծիքն յայանեմք :

Վզմամարայ կաթողիկոսութեան
խնդիրն այնպիսի սոսկալի գեպէեր կը
պարաւնակէ իւր մէջ , և այնշափ գը-
րուած ու խօսուած է այդ մասին ,
որ մեր կողմէն բօլորովին աւելորդ կը
համարէմք վերստին արծարծէլ : Ո՞եք
կը զարմանամք , որ նոյն խակ Վզմային
Վարչութիւնն անընդհատ կը տագնա-
պի գոյն խնդրով , մերթ կը լուծէ կ'ո-
րոշէ , կը վճռէ և կաւարտէ , և մերթ
վերստին կը դառնայ և նոր ՚ի նորոց
կըսկսի յուղել և յուղուիլ : Վա ըն-
թացքն ոչ միայն Վարչութեան հա-
մար ժամանակի կորուստ է , այլ և ժո-
ղովրդեան , մանաւանդ Վզմամարց-
ւոց համար յարատեւ գոյմակզու-
թեան առիթ : Այսն խնդիրն յերեւան
դարու օրէն ՚ի վեր , քանի քանի ատէ ,
լութիւններ թշնամանքներ և կոիւններ
չեն տեսնուած խղճալի թեմականաց
մէջ : Այսն խնդրոց արագ լուծումն , որ
պիտի խաղաղութեան պապճառ լի-
նէր անշուշտ , երկարելով դարձած է
առիթ խռովութեանց : Վայուսուան
հակառակորդն՝ վաղն պաշտպան կը
հանդիսանայ , խակ պաշտպանն հա-
կառակորդ : Ո՞ի թէ ը՞ նշմարէր Ազ-
գային Վարչութիւնն խնդրոյն երկա-
րաձկութենէն յառաջ եկած այս ա-
ղետալի հետեւանքներն , որով զգալի
կերպիւ անբարոյականութիւն կը սեր-
մանուի ժողովրդեան մէջ , այն է , որ
տախօսութիւն , շահամըսութիւն , ո-
գի վէմինդրութեան և երկպառա-
կութեան , այսպին հանդերձ :

Վրէ՝ ներեցէք ուրեմն , որ մէք ա-
մենեւին արժան չեմք տեսներ սոյն այ-
լանդակ խնդիրն խորհրդածութեան
առնուուլ և այս ինչ կամ այն ինչ կու-
սակցութեան կիրքերն յուղել : Ո՞եք
համար արդէն լուծուած կը համա-
րիք Վզմամարայ խնդիրն ճիշդ այն-
պէս , ինչպէս լուծուած է Ասոց իրին-
դիրն :

Ըս. Պ. Ա. Ա. Կաւետէք մեզ
Վասպուրական Վաճւցն նոր հրատա-
րակութիւնն : Վրդարեւ տւեաման
և ուրախութեան արժանի լուր : Ո՞եք
արդէն կը սիրէնիք Վասպուրական Վր-
ծուին . վասն զի հայրենի ծոցէն կել-
էր , Հայրենեաց նկարագիրներ կը
պարունակէր , հայրենասիրի շունչ կը
չնչէր , հայրենասիրութեան թռիչով
կը թռչէր և իր գագարումն մեծ ցաւ-
էր մեզ համար : Վայմ վերստին ՚ի
լոյս կըգայ իր գագարման հայրենի
քունէն . նոր խօսատումներ կը խօսատա-
նայ . նոր յոյսեր կը զարթուցանէ և
իւր ընթացից նոր ուղին կ'աւետէ :
Վաղը խօսատումներ և գեղեցիկ նը-
պատակներ . բայց գիտէք , որ ազգայ-
ին լրագրաց և օրագրաց նկատմամբ
մէք թառլինյի հաւատքն ունիմք . մին-
չեւ ը տեսնեմք , կարող չեմք սրաովին
հաւատալ : Վասպուրական Վաճւց
նոր հրատարակութեան հաղիւ թէ
շրս թիւերն տեսած եմք , և տակա-
ւին կըսպասեմք իւր խօսամանց կա-
տարումն տեսնել և այնուհետեւ ոչ
միայն հաւատալ , այլ և մեր հաւա-
տոց արդիւնքն հրատարակել ՚ի լուր
աշխարհի : Ո՞եք նոր Արծիւէն շատ-
րան կըսպասեմք . վասն զի կը լսեմք ,
որ նոր խմբագիրն հայրենասիրական
խանդիրն հետ ունի նաեւ պաշար Գեր-
մանական լրասաւոր կըթութեան .
բայց արդէն ասացինք , որ աշաց տե-
սութիւնն առաւել է մեզ համար

քան զլուր ականչաց :

Աւրեմն ուրախ սրտիւ չնորհաւոռ
բելով Վասպուրական Վրծւոյ նոր հը-
րատարակութիւնն՝ կը մաղթեմք յա-
ջազութիւն և յարատեւութիւն, որ
իւր խոստումներն լրիւ կատարէ :

Եւ Պ. Տ. Գ. Կիլիկիյ Կաթո-
ղիկոսութեան նկատմամբ ձեր գրած
ընտիր տեղեկութիւնքն սիրով կար-
դացինք, բայց կը ցաւիմք որ հաճու-
թիւն յայտնած չէիք հրատարակու-
թեան մասին :

Վրդէն մեք եւս տեղս յաճախազ
Կիլիկիյ կաթողիկոսական թեմի ուխ-
տաւորներէն կիմանամք, որ Տ. Տ.
Վկրտիչ արթուն Կաթողիկոսն շարու-
նակ այց ելանելով վիճակաց՝ կը ջա-
նայ եկեղեցիներն բարեկարգել, ժողո-
վորդեան պէս բերն լսու կարելոյն
հոգալ, վշտացեալներն սփոփէլ և յո-
զովորդեան իրաւունքներն պաշտպա-
նել, Կը լսեմք նմանապէս, որ մեծ փո-
փափակ ունի քանի մի դպրոցներ հի-
մել հայոբնակ քաղաքաց և գիւղորէ-
ից մէջ. Աակայն ցաւելով կը լսեմք
ընդ նմին, որ մեծ ափափակ Հայրապե-
տըն ամենեւ ին իւր նպատակին օժան-
դակող պաշտօնեայք չունի և այս մա-
սին սաստիկ կը տագնապի. Երանի
թէ Վզգային Վարչութիւնն ոչ միայն
՚ի քաջալերութիւնն Կաթողիկոսին, այլ
նամանաւանդ ՚ի յառաջադիմութիւն Ավ-
լիկոյ ազգայնոց, քանի մը ընտիր և
գործունի պաշտօնեայք զգէր ՚ի Կի-
լիկիա. Աամսն զի յայտնի է արդէն.
որ Կիլիկիա խիստ մեծ կարօտութիւն-
ներ ունի թէ նիւթապէս և թէ բա-
րյապէս : Եւ սոյն կարօտութիւննե-
րըն ոչ թէ լոկ Կաթողիկոսի ջանադ-
րութեամք, այլ Վզգային Վարչութիւն-
գործակցութեամք կարող են հոգա-
ցուիլ: Եյնպէս կը լսուի թէ Տ. Տ.
Վկրտիչ կաթողիկոսն արդէն քանիցս

առաջարկութիւններ բառձ է այս մա-
սին, բայց չ գիտեմք, թէ Վզգային
Վարչութիւնն Բնչպէս տնօրինած և
Բնչ պատասխանած է. ձեր տուած
տեղեկութեանց մէջ եւս այս մասին
ամեննեւին խօսք չը կար. Եթ յուսամք
թէ ուրիշ անդամ անպատճու կը
հաղորդէր.

Ն Ա Բ Հ Յ Ո Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՀԱՄԱՌՈՑՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՏԱՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Ավատափրութիւն

Պետրոսի Ա. Շանչեանց

Բ. ՏՊԱԳԲՈՒԹԻՒՆ

Այն գասական օգտաւէտ երկա-
սիրութիւնն, որ առաջ հրատարակ
ուած էր Ռուսաստանի Հայոց աշխար-
հիկ բարբառով, այժմն վերստին ՚ի
լոյս ընծացեցաւ Ս. Աթոյս տպարանէն
Տաճկաստանի աշխարհիկ բարբառով,
՚ի պէտա Աղդ. Դ զրոցաց, որ կը բաղ-
կանայ 200 երեսէ և կը ծախուի թէ
Ս. Աթոյս գրատան և թէ Կ. Պոլ
ոյ Երուսաղեմատան մէջ, ՚ի գին 5
զուրուշ :

Մէր կողմէն աւելորդ կը հա-
մարեմք սոյն ընտիր երկասիրութեան
արժանաւորութիւնն, նիւթոց վայե-
լուչ գասաւորութիւնն եւ ուսանողի
սրտի ու մոռաց հետ խօսող ամեն յատ-
կութիւնքն մի առ մի թուել և գովել.

այս դնեահատութիւնը կը թաղումք
աստուածասէր և մարդասէր ընթեր-
ցողաց ։ իսկ ուսմնե եղանակին և
ուսուցչաց պարտուց վերաց անհրա-
մեշտ հագիկ կը համարիմք քանի մի
խօսք ասել :

Քրիստոնէական ուսման կարեւուրութիւնն ամեն դարուց եւ ամեն քրիստոնէայ ազգաց մէջ ընդունուած է իբրև անհրաժեշտ ուստ և սրբական ճշմարիտ քրիստոնէութեան կան աղեքը, որ նախ քրիստոնէութիւնը կուսացանեն մանուկներուն և ապա կը մլպտեն, կան նմանապէս ազգեքը, որ կը մլպտեն այն ու խսիր և խսամամբ, որ անշուշտ հասակի զարդացման հետ քրիստոնէութիւնն եւս ուսուցանեն Մեր Հայուստահեաց Առաքելական Ս. Եկեղեցին իւր առաքելաւանդ սովորութեամբ այս վերջին կարգին կը վերաբերի. վասն զի Առաքեալը իմկ ամբով գերդաստաններ մլրտած ժամանակի կը մլրտէին նա և մանուկներ, որ մեծ միսիթարութիւն էր ծնողաց. ասկայն մեր Եկեղեցին մանկանց մլրտութիւնն ընդունելով հանգերձ՝ ի ձեռն ծնողաց և կնքահօր անսպայման ուստ կը պահանջէ, որ մլրտէալն ի ժամանակին ուստի ուսումն քրիստոնէական հաւատոց. Ահա այստեղէն յայտնապէս կ'երեւի որ մեր բողոք մանուկները ուխտած են, ուստի և անշուշտ հսուկ առ որ է որ իրենց ուխտան անթերի կատարեն: Նետեւապէս քրիստոնէական ուսումն ամեննեւին ընմանիր այլ ուսմանց և գիտութեանց, զօրս կուրելին է ուստանիլ կամ չուսանել, այլ ամեն քրիստոնէայ մանկան համար առհասարակ, թէ արուին և թէ իգին, թէ քաղաքացւոցն, թէ շնչականնն, թէ մեծաւանն եւ թէ աղքատին համար անհրաժեշտ պարտաւորութիւնն է, և այն եւս ուխտազրեալ պարտաւորու-

թիւն, որ և անշտ չա պետք է որ զբ-
րաւէ մեր խորին ուշադրութիւնն ։
Վասն զի քրիստոնէական ուստիամք է ,
որ Եկեղեցին կ'առողջանայ , կը կենդա-
նանոց և կը խայտայ իւր մէն մի նո-
րածին սերնդով և քրիստոնէութիւնն
ահասասան կը յարատեւէ դարսոց ՚ի
դարս , ոչ միայն իբրև վարդապետու-
թիւն , այլ իբրև կեանք և կենդա-
նութիւն :

Այս անձինք , որոնք քրիստոնեաց
մանկանց դաստիարակութեամի պաշ-
տօնը կը վարեն , նոցա պարտաւորու-
թիւնը մ.ծ է քարոզի պարաւաւորու-
թենէն : Նորա ունին իրենց առջև բա-
ւակն դժուարութիւններ , բայց ունին
և քաղցրութիւններ . նոցա պարտա-
ւորութիւնն է ոչ միայն կրօնիք մկրղ-
րունիքն ուստացանել , այլ և ընդ նմին
կեանք հիմնել , և որովհետեւ կեանքը
կը հիմնուի օրինակաւ և նմանողու-
թեամբ , ուստի ուստացանողներս
կեանքը պէտք է որ ըստ ամենայնի օ-
րինակելի լինի : Նորա այնցափ պիտի
երկնեն մինչեւ որ Քրիստոս նկարուի
մանկանց մէջ , ինչպէս կ'ասէ Պօղոս
առաքեալն . “Որդեակը իմ , զբա գար-
ձեալ միրստին երկնեմ մինչեւ նկա-
րեսցի Քրիստոս ՚ի ձեզց Գաղ . Դ . 19 :
Պէտք է խնամով ուշադիր լինել ման-
կանց ընդունակութիւննն , մեծ առաւ-
ւելութիւն չը տալ արագ պատասխա-
նողներուն և մտացներուն , և չ'որ-
համարել այնպիսիններն , որոնք մորով
ստոր են , բայց սրասով բարձր . վասն
զի քրիստոնէական ուսման մէջ , որաի
պատասխաններն , եթէ ծշմարիտ եւ-
ողիղ են , աւելի մեծ արժանաւորու-
թիւն ունին քան թէ մոտաց նկր-
բութիւններն և ամենաբարձր թշ-
ուիններն . Գառատիարակի ւթեան մէջ
մէր առաւել կը փայփայեմք ուշի-
մներն , բայց կան ծանրաբարբց և

զքայուն մանուկներ, որք գերավանց են առաջններէն. Քրիստոնէութիւնն ուսուցանելու ժամանակ՝ պէտք չէ աճապարել, պէտք չէ մանկան միտքը զբաղեցնել և սիրու պարապ թողուլ, այլ պէտք է զգուշանալ, որ մանուկը ոչ թէ սովորական ուսումն նկատէ հաւատոց ուսումն, այլ իւր դասերուն մէջ իւր կերանքը, տեսնէ և խելումէ որ իւր քրիստոնէական դասու ժամերըն հոգեւոր շինութեան և գործունէութեան ժամեր են: Միով բանիւ պէտք է ջմնալ, որ մանուկն ինքնին խելամոնէ, որ իւր ուսումն միայն ուսումնք չէ, այլ հորժ և պաշտօնանք: Քը րիստոնէական ուսման հետ պէտք է առաջնորդել մանկան Աստուածաշուն քնն լնիթերց սփրելու, և ամենէն ընտիր քրիստոնէական դասագրքերն և ուսուցիչներն նորա են, որոնք այս առաջնորդութեան եղանակն ու յատիութիւնն ունին: Ինչ դասագիրք և ինչ ուսուցիչ, որ քրիստոնէական ուսումն աստուածաշնչն կը բամնէ, քրիստոնէութիւնը կը մեռուցանէ քան թէ կը կենդանացնէ: Մեր Եկեղեցւոյ երանաշնորհ վարդապետոց հետեւելու համար՝ պէտք է որ մեր քրիստոնէական դասագրքերն Սուրբ Գրոց կենդանի հոդւով Հոգիսացած լինին և դէպի Սուրբ Գրոց ընթերցումն առաջնորդեն մանուկներն:

Ուսուցիչն անշուշո պարտաւոր է, որ կանխաւ զինքն պատրաստէ իւրաքանչիւր դասի համար և ամեննեւին չամէ թէ մանուկներ են և պատրաստութեան կարևորութիւնը չը կայ. վասն զի Շանկանց հետ խօսիլն այնշուփ գիւրին չէ, ինչպէս որ կը կարծուի, Ընդհակառակն շատ հայտնի ժիւտ են այն անձներն, որոնք մանկանց հետ խօսելու տաղանդն ունին: Քրիստոնէութեան նշանաւոր ուսուցիչներէն մին,

առաւօտ մի, առանց պատրաստութեան դասի երթալով, այսպէս աղողակած է «Աստուած, օգնեա ինձ, ես անպատրաստ եմ սյաօր, օգնեա ինձ որ անօգուտ չանցնի ժամերս, վասն զի ես գիտեմ, որ առանց պատրաստութեան իմդասերս չոր ու ցամաք կը լինին, խառնաշխիթ և անազդեցիկ, մանուկներն կը շիտմին և մտադիր չեն լինիր, որով և իմ դասախսութիւնս ձանձրալի և անպատուղ կը լինի, թէ նոցա և թէ ինձ համար. օգնեա ինձ Աստուած, որ այս աղէտին չը հանդիպիմ»:

Պատրաստութիւն ասելով թող ըսկարծուի թէ մեք կուզեմիշ հասկացնել դասախսութեան գրելն ու բերանոցի սերտելըն (գոց ընել). ընդհակառակն աւելի ցանկալի է որ քրիստոնէական ուսուցիչ դասերն ոչ թէ ճառախսութեան, այլ աղատ և ընտանեկան խօսակցութեան ձեւ ունենան. և ահասոյն այս ձեւոյն համար ամենալաւ պատրաստութիւն պէտք է: Քաղցրութիւնն ու համբերութիւնն գրիստոնէական ուսումն աւանդելու ամենակարիւոր պայմաններն են. խակ կատակել կամ ծաղքելն բողոքովին աններելի, որով շատ անգամ մանուկն կը շիտմի և կը տատամանի այլոց առջեւ: Քաղցրութիւննապէտք է լինի հայրական, բայց միանդամանցն պարկեշտ, վեհանձնական և առնական: Այսպիսի սիրով է որ ուսուցիչն կը գրաւէ մանկանց սրտերն և միշտ վեհ կը մնայ նոցա առջեւ: Ընտանեութիւնն եւս պէտք է լինի ծանրաբարոց և ոչ երբէք թեթեւաբարոց. վասն զի կրօնական ուսման մէջ հազիւ թէ ժապելու տեղի կայ և ոչ երբէք ծիծաղելու: Պէտք է մանկանց սիրան շարժել և գրաւել և ոչ երբէք զուօցնել և զուարձացնել Այսն ուսման հետ ուսուցիչներէն ու-

մանք բարոյական վէպեր կը խառնեն .
պէտք է որ խիսա մեծ ընտրանօք լինին ,
պատշաճաւոր տեղն միայն առաջ բերանին ,
ապա թէ ոչ խապառ անտեղ և անօդուտ կը լինին :

Աւուցանելու ժամանակ մանկանց
ընական կազմութեան վերայ եւս մը-
տադրութիւն դարձնելու է : Պէտք չէ
չափէն դուրս խօսիլ և ձանձրացնել .
այլ աւելի հարցնել քան թէ իր կող
մէն երկարապատռմ լինել : Վասն զի
հարցումներն մանաւկն՝ գործունէութե-
մէջ կը պահեն և ձանձրոյթ չեն տար : Ա-
մենէն վաստ եղանակն է առաջկայ զըլ-
խուոր նիւթէն հեռանալ և ուրիշ բա-
ներ խօսիլ , որով թէ մանկան և թէ
նոյն իսկ ուսուցչին համար դժուարին
կը լինի վերստին դառնալ և առաջին
նիւթն գտնել :

Պէտք է խորին մուղբութեան աս-
նուլնա և իւրաքանչիւր մանկան ար-
ևած պատասխաններն . վասն զի իւ-
րաքանչիւր պատասխանէն անհնարին
է մանկան խմայումն կշռել : Քրիստո-
նէական դասախոսութեան մէջ շատ
անդամ ոչ թէ դասուց ժամանակ ,
այլ դասերէն արտաքոյ պէտք է մա-
նուկը տեսնել և քննել , վասն զի շատ
անդամ տմենէն լաւ ուսանողներն և
պատասխանողներն՝ ամենէն լաւերն չեն .
քրիստոնէական ուսումնական աշակերտի կե-
նաց և վարուց մէջ քննելու է , և ահա
այս քննութիւնն է ամենէն անխարին :

Ու որ այսպէս մեծ խնամքով և ա-
ռաջդրութեամբ կ'ուսուցանէ քրիս-
տոնէական կրօնի ուսումն , նա մեծ
գործ կը գործէ և չը կորուսաներ եր-
բէք իւր վարձքն . Ամէն ամէն ասեմ
ձեզ , ասաց Քրիստոս , որ արբուսցէ
միում ՚ի փոքրկանցս յայսցանէ բաժակ
մի ջուր ցուրտ միայն յանուն աշա-
կերտի ոչ կորուցէ զվարձո իւր ։
Մատ . Ժ . 42 :

ՃԱՇՈՅ ԳԻՐՔ

Տպագրուած է Ա . Աթոռոյս Տը-
պարանին մէջ մաքուր և վացելու-
թղթի վերայ . ունի երկու ընտիր պատ-
կերներ , պտուղ եւրոպական ճարտար
արուեստագիտութեան : Կը վաճառի
թէ Ա . Աթոռոյս գրատան , և և թէ
Կ . Պօլսոյ Երուսաղեմատան մէջ ՚ի
գին երես Օմանեան ոսկի :

Սոյն նոր տպագրութեան մասին
ընթերցողաց սակաւ ինչ ծանօթու-
թիւն տարու համար՝ արժան կը հա-
մարիմք դնել այս տեղ իւր համառօտ
յառաջաբանն :

՚ի փառս Ամենասուրբ Երրորդու-
թեան և ՚ի ժառանգութիւն Հայաս-
տանեացց Առաքելական Սրբոյ Եկե-
ղեցւոյ՝ խնամով տպագրեցաւ ՚ի նորոյ
ձԱՇՈՅ անուանեալ Մատեանս , ա-
մենահարուստ Գանձարանն ընթեր-
ցուածոց Հին և Նոր Կտակարանաց ,
Աղօթից և ձառից , ՚ի Նախնեացն մե-
րոց շարակարգելոց ըստ խորհրդոյ և
ըստ պատշաճի խրաքանչիւր Աւուրց
և Տօնից տարեկանաց , զգուշաւոր
բաղդատութեամբ Աստուածաշունչ
ընթերցուածոցն ընդ գրչագիր և ընդ
տպագիր ընտիր օրինակաց , և փոխա-
նակ Աւագ Ուրբաթու Կտակին , որ
ոչ տեսանի ՚ի հիննան , եղաւ պատշա-
ճաւոր ձառ Խաչն , արարեալն յԵ-
րանելոյն Արձեցւոյո :

ԱՏԵՆԻ ԱԼԵՏԱՐԱՆ

՚Սոյնպէս տպագրութիւն Ա . Ա-
թոռոյս , որոյ մէջ կը պարունակին ոչ
միայն ցարդ Ատենի Աւետարանի մէջ
գտնուած ընթերցուածներն , այլ և
յաւելեալ կայ յատուկ ցոնկ այն աւ-
ետարաններուն , որբ կը կարդացուին

Հեր սքանչիւր առուր Ալնթացս բուլոնդակ տարւցն :

Դի 30 բահելան :

**ՄԻ ԳԼԽԱԽՈՐ ՊԱՅՄԱՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ**

Յայսնի է թէ՝ ներկայ դարուս պատմագրութիւնն իփստ մեծ առաւելութիւններ ունի նախնի դարուց պատմագրութիւննեն : Արդեան դարու պատմութեան վիթսապիսութիւնն ըստ լորովն առըբեր ուեսութեամբ կը նայի նախնի դարուց մէջ գրուած շատ պատմական անցից և իրողութեանց վերայ ։ Ուստի կարող եմք ասել թէ՝ ինչպէս միւս գիտութիւններն, նոյնպէս և պատմութեան գիտութիւնն իփստ յառաջ գնացած է և տակաւին յառաջնայլու և կոտարագործուելու վերայ է : Այս մասին մեծամեծ խուզարկութիւնը և քնն սղատութիւնը անդնդհուած կը չըրունակին : Ամանը կը պընդէն թէ՝ պատմութիւնն անաշառ լինելու համար՝ սկէտք է որ պատմագրի ընի ըստ պատկանի ոչ մի երկրի, ոչ մի մարդկան դասակարգի, և ոչ մի կրօնի : Այս պահանջութեն ուրիշ բան ըստ հետականի ոչ մի երկրի, ոչ մի մարդկան պատմութիւնի մարդկաւթեան : Այսպիսի մի պատմագրի տակաւին գտնուած չէ, և եթէ գտնուի եւս, պատմութեան գիտութիւնն ամենեւին սիխտի ըստ շահի նորա երկասիրութիւննեն :

Մարդկային շահուց մասնակցութիւն չունեցող մարդն կարող չէ անշաւշու ունենալ գիտութիւնն մարդկային իրողութեանց : Վասն զի առանց համակրութեան գրեթէ անհեարին է նաև մարդկային վիճակի գիտութիւ-

նըն . վասն զի գիտակցութիւնն , շատ անգամ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ զգացումն : Միտքին որ կը տրամաբանէ և կը հաշուէ, ոչ ինչ է տռանց սրափ, որ կըզգայ և կը գուշակէ : Սրտի յայտնութիւններն են, որոց վրայ միտքն կամ բանականութիւնն կը խորհի և կը տրամադրէ : Խնչպէս կարելի է առանց քաղաքացի լինելու՝ հասկնալթէ ինչ է քաղաքացին . առանց հաւատալու՝ հասկնալթէ ինչ է հաւատացեալն, միուլ բանիւ, ինչպէս կարելի է առանց մարդ լինելու՝ հասկնալթէ ինչ է մարդն :

Մարդկանց պատմութիւնն մարդկային սրտի կամ հոգւոյ պատմութիւնըն է . արդ հոգին միայն կարող է ճանաչել և հասկնալ զհոգին : Ուրեմն անհեարին է որ Ճշմարիտ պատմաբանն անգգայ և անկարեկից լինի, այլ ընդհակառակն սկէտք է որ լինի նոռ բովանդակ և կատարեալ մարդ : Կատ կը խարուիմք, եթէ կարծեմք, որ Ճշմարտութեան վերացական սէրն կարող է մարդկային բոլոր զգացմանց աեզն բռնել : Երբ մարդկային զգացումները չը կան, կարող չէ լինիլ մարդոյ մէջ սէր Ճշմարտութեան : Ավ որ Ճշմարտութեան սէր կը կրէ իւր անձին մէջ, անշաւշու կը կրէ և միւս զգացումներն . մարդկային բարցականութեան տարեցն իրարմէ անկախ չեն . այլ ընդհակառակն իրարու հետ կապուած են սերու կապով : Ամեն առաքինութիւններ մի և նոյն սկզբունքն ունին և իւրենց արմատով մի և եթ առաքինութիւննեն : Բաց յայսմանէ Ճշմարտութեան սէրն՝ բարցականութեան այն տարրն է, զոր երեք անհեարին է մէն միայնակ երեւակայցել կամ ըմբռնել : Ճշմարտութեան սէրն կ'ենթագրէ արդէն շատ տարեցք առաքինութեան : Ճշմարտութեան սէրն է վե-

լին արդիւնք, ամենաջնջնջ ծառաւ-
լումն և ամենազնիւ բուռումն հո-
գւոյ, որ կ'ամբոփէ իւր մէջ ամեն
զգացմունք և կը ո՞րէ զարդարութիւնն :
Ճշմարտութեան սերն խկապէս ոչ
այլ ինչ է, եթէ ոչ սէր առաքինու-
թեան, ինչպէս և առաքինութեան
սերն ոչ այլ ինչ է, եթէ ոչ սէր գործ-
նական ճշմարտութեան : Վէտք է ու-
րեմն որպէս հիմն սիրոյ ճշմարտութեան
անշուշո ենթագրել ամեն մաքուր
զգացմունք և դորովանք մարդկային
սրափ : Եւ որովհետեւ իւրաքանչիւր
սէր, անշուշո սիրոյ առարկայ մը կեն-
թաղրէ, հարկ է ուրեմն որ ճշմար-
տութեան սիրահարն եւս ունենայ իւր
սիրոյ առարկայն : Իրբեւ մարդ պէտք
է կրէ նա իւր մարդկային սրտի մէջ
հայրենիք, գերդաստան եւ զԱս-
տուած : ԶԱստուած կ'ասեմք, վա-
սըն զի անհնարին է որ մարդն առանց
Աստուծոյ մարդ լինի : Գուցէ ասուի
մէջ թէ՝ սոյն ենթագրութիւններն նա-
խապաշարմունք են և կանխակալ կար-
ծէք. բայց հարկ է իմանալ որ առանց
սոյն կարծեալ նախապաշարմանց կա-
րող չէ մարդ ընդունակ լինի իրմէն պա-
հանջուած ճշմարտախօսութեան : Եւ
թէ պատմագիրն չկրէր իւր մէջ սիրոյ
բայրո տարերն, կարող չէր նա պար-
ծիլ, որ կը սիրէ ճշմարտութիւնն . վա-
սըն զի անհնարին է առանց բարի
կամ չոր կրից մարդ մի երեւակայել,
և որովհետեւ մարդոյ հոգւոյ վիճակն
կը յայտնուի իրեն գործունէութեամբ
և հոգւոյ գործունէութիւնն է զգա-
ցումն . ուրեմն պէտք է ասել որ դժո-
յունն է գլւածոր պայման պատճադրութիւնն :
Կը մեայ մեզ ուրեմն որոշել լսու
կամ վատ կիրքերն, որոց միսյն կամ
միւսոյն անպատճառ ենթարկուած է
պատմագիրն : Երբ մի պատմութիւն
կը կարդամէք, որչափ որ նախատուի ծա-

նուցուած լինի թէ՝ միայն ճշմարտու-
թիւն խօսուած է, չեմք կարող ոյնսկի-
սի ճշմարտախօսութիւնն ըմբռնել, որ
լինի առանց զգացման : Եթէ պատմա-
բան մի կանխարանէ մեզ, որ գրած է,
իւր պատմութիւնն, չը պատկանելով
ոչ ցեղի, ոչ գերդաստանի և ոչ մար-
դոյ, ակամայ զինքն կը մատնէ, որ իւր
չը խօսուվանած կիրքով ներշնչուած է
իւր երկասիրութիւնն : Նորա սառ-
նութիւնն կամ անտարբերութիւնն
կարելի չէ ամենեւին գրաւական հա-
մարել անկողմնակաղութեան : Աւելի
անաշուառութիւն կարող է յուսացուիլ
սէր և զգացումն ունեցող պատուա-
ւոր մարդէ, քան թէ սառնարիւնէն
Վասն զի զգացումն ունեցողն, որով
հետեւ մարդ է, աւելի լսու կարող է:
ճանաչեցնել մեզ մարդն, քան թէ այն
պատմաբանն, որ զինքն անկողմնակաղու-
կանուանէ և որոյ համար օտար եւ
անշան են մարդկային զգացումներն :

Բարձրածայն կը նշաւակիմք մեք
կուսակցութեան ոգին, որ կլնդարմա-
ցընէ ամենէն մեծ մաքերն և մարդկե-
զէն փափուկ օրտերն կը կարծրացնէ:
ու բարեղն կը դարձնէ : Ալ խւասու-
վանիմք, ՚ի նախատոինս մարդկային ըլ-
նութեան, որ շատ հաղուագիւտ է
կատարեալամբծութիւնն ամենասուրբ
համոզմանց, ամենասուրբ որպէս պաշտոպա-
նից մօտ անդամ, Կը խսստովանիմք
նաեւ, որ կարծեաց ջատագովութէց
մէջ անդամ շատ սակաւեն այն գո-
վեսաներն, որ բոլորովին անմեղ են:
Բայց չը պահանջեմք ինչ որ անհնարին
է և հակասական : Զը պահանջեմք չը
պասեմք ճշմարտասիրութիւն այն հո-
գիէն, որոյ համար օտարութիւն ամե-
նայն զգացմունք սիրոյ : Հաւատաք
որ, երբ անըիծ է մարդոյ սիրուն, ա-
մեն զգացումներ և համոզումներ կա-
րող են համաձայն լինիլ իրարու հետ :

Մեր բնութիւնն ընդունակ է այս բանին, բայց աչ երեկ առանց զգացման ճշմարտասիրութեան : Ոչ միայն պատմութիւնն, այլ նոյն իսկ մն ինութիւնն, եթէ ասութածաբանական և քրիստոնէական ճշմարիտ սիրով չէ մեկնուած, ունայն է բոլորովին, ինչպէս որ ունայն է, եթէ առանց իմաստի և լեզուագիտական արուեստի մեկնուած լինի : Ոչ ապարէն պատմութիւնն եւս մեկնութիւն է իրողութեանց և գործոց մարդկան : Այրան է որ կը կենդանացնենէ մեր մօռածմունքներն և միմեանց կը մօռենէն . աւր որ սիրոն մասն չունի, նիւթերն միշտ բաժանեալ կը մնան Հեռուէն տեսնուած ապարանքն կ'երեւի իբրեւ մեծաղանկ քարակցու մի կամ հողակցու . բայց որչափ կը մօռենամբ, այնչափ կ'երեւին ապարանքի մսսերն, սիւներն և ճարտարապետութեան կարգ ու կանոնն . Երբ իրերն կը տեսնեմք առանց սիրոյ, կը տեսնեմք միայն հեռուէն, այսինքն կը տեսնեմք խառնաշփոթ : Հետեւապէս ով որ կ'ասէ թէ առանց զգացման կարելի է անաջոռ պատմութիւն գրել, շատ կը սխ ովի : Վասն զի պատմութիւնն բացատրութիւն է անցից և իրողութեանց, և Բնչպէս կարելի է իրերն հասկնալ առանց զգալու և նոցավերայ իշխնլու : Զդալ և հասկնալ կը նշանակէ իշխել : Պատմագիրն չէ կարող իշխել իրողութեանց, եթէ նոցախորն թափանցած չէ ոչ միայն մտօք, այլ և սրտով : Պատմութիւնն կամ պատմագրի երկն նորա սրտի և մոաց պատկերն է : Ամեն իրողութեանց հետ ձուլուած է պատմագիրն իւր յատկանական պատմագրով, ամեն անցից մեջ խառնուած է նորա հոգին : Ի զուր է, եթէ ջանայ պատմագիրն բաժանել զննքն իրողութիւններէն : Ինչ եղանակ որ բռնէ, ինչ ձեւ որ ընդու

նի, նա միշտ պէտք է միածոյլ երեւի իւր պատմածին հետ, և ամենէն ճշշմորիտ պատմագրութիւնն այն է, որց մէջ պատմագրի միաբն ու սիրտն միանդամայն կ'երեւին : Հետեւապէս քանի որ պատմութիւնն նախնի դարուց լոկ ժամանակագրական անցից նը կարագրութիւնն փոխուած է ի գիտութիւն, պէտք է որ գիտութեան ամեն պայմաններն ունենայ, այն է, գէպքերն քննուած և կշռուած, իրերն պարզուած, անցից յաջորդ և հետեւորդ պարագայներն իրարու հետ կապուած, և, ամենէն աւելի, պատմագրի զգացմամբ աղխաղսուած : Այս պայմաններէն զուրկ պատմութիւնն ներկայ դարուս մէջ չունի ճշմարիտ պատմութեան արժանաւորութիւն :

ԱԶԳԱՑԻՆ ԿԾԱԿԱԳԻՐՔ

Մեր Ազգին մէջ գտնուած են միշտ լիշտակաց արժանի մարդիկ, որք զանազան ժամանակ կտակաւ գումար ներ թողած են յօդուտ ընդհանուրին : Սոյն կտակեալ գումարներ էն շատերն աշողուրջ կտակակատարաց ձեռքով գործադրուած են բարեպաշտ կտակարարաց նպատակին համեմատ . բայց գմբագդաբար շատերն եւս ան գործադիր մնալով է որ յումպէտս վասնուած են և է որ կորուսուած : Մեր նպատակն չէ այս տեղ յականէ յանուանէ թուել Ազգային կտակարարներն ու կտակագրերն, որք իրենց յարակից գէպքերով գրեթէ Ազգային կտակաց առանձին պատմութեան նիւթ կը կազմեն . այլ միայն կամիմք ասել թէ որչափ որ անմահ երախտագիտութեան արժանի են ազգասէր կտակարարքն, նոյնչափ եւս հաւա

տարիմ՝ համարատու կտակուկատարքն նորումս մեր ձեռքն հասաւ 1872 ին Տփիսիսի մէջ տպագրուած մրտետ բակ, որ կը պարունակէ հանգուցեալ Յավսէփ Եֆէնդի սնցի համառօտ կէն սագրութիւնն պատիերով հանդերձ, նորա կտակադիրն և կտակակատարաց 10-ամեւայ մանրամասն հաշուեցոյն, Սոյն տետրամին յայտնագէս ցոյց կը տայ թէ հանգուցելցն բարեխիղճ կը տակակատարքն Պ. Գ. Գրիգոր Խզմիրեանց և Աւետիք Սլէշնիկէանց Բ'նչ գովիլի աշխատութեամբ ծառայած են հանգուցեալ կտակարարի կենդանի նպատակին, և թէ Բ'նչ ինքնայորդոր համարատուութեամբ հրատարակած են իրենց հաշուեցոյն ՚ի գիտութիւն Աղդին, Փափագելի էր որ սոցագեղեցիկ արարքն օրինակ լինէր ամեն կը տակակատարաց, Մեք շատ կտագրեր կարդացած եմք, բայց գրեթէ առաջինն է որ կտակակ սուսրաց գործառնութեան հաշուեցոյց կը տեսնեմք, Մեք այնպէս գիտեմք, որ ամէն ազգային կտակակ ստարք պատասխանառուութիւն պարտաւորութիւն ու գւմին Աղդին առջեւ, սակայն շատ անգամ ոչ կտակակ ստարքը ինքնին գովլի և ոչ Աղդային Վարչութեանց կողմէն պահանջութիւն լինելով այն մեծ պարտաւորութիւնն գոզցես ՚ի շարապարտաւորութեանց համարուած չէ, ուստի և շատ կտակներ, ինչպէս ասացինք, կամ ապարդիւն մնացած են և կամ ՚ի կորուատ մատնուած, Կեցցե՞ն ուրեմն հայրենասէր Խզմիրեան և Սլէշնիկեան, որք իրենց արդիւնաւոր համարատուութեամբ՝ կտակակատարութեան գեղեցիկ տիպար կը հանդիսանան Աղդին մէջ:

ՀԵՄՄԵՍԻՎ ՇՐՋԵՆՔ

— Բնեթղենէմի վարագուրաց ինպիրըն տակաւին նոյն դրութեան մէջ է, Կ սիսուած վարագողն նախնականին շափէն շատ մեծ լինելուն և միանգամյն պատականն նշաններ կրելուն համար՝ բողոքոյ տակ է մեր և Յունաց միուրանութեանց կողմէն, Լատինք կը յամառին և Տէրութեան կողմէն տակաւին վերջնական հրաման շեկաւ ներկայ վարագուրի բարձման և նոր, չափաւոր և օտարասախ նշաններ չը կրող վարագուրի մը կախման համար, Յոյտնի է որ մեր պատկերներէն մէկն տակաւին կախուած չէ, վասն զի մեր պատկերի տեղն Լատինք պատկեր կախած են, որ բողոքովին իրաւանց բոնաբարութիւն է, Այս ինդիրն եւս վարագուրի իննդրոյն յարակից է և ասկաւին կը շարունակի, Թէսէտ և տեղոյս Առաւակալն առաջարկեց ուրիշ տեղէ պատկեր մի կախել, բայց մեր պատկերի տեղն յափշտակուած լինելուն համար՝ առաջարկութիւնն մերժուեցաւ:

— Ի՞25 ամսոյս, որ էր ՚ի ն Ապրիլ իւ ըստ նոր տումարի, Լատինք Ծաղկաղարդի հանդէս կատարելու ժամանակ ՚ի Բէթղեհէմ առիթ ուուած են մեծ խովութեան, Հանդիսաւոր թափարն շը նեցուցած են այնպիսի տեղէ, որոյ իրաւունքն Հայոց և Յունաց միայն կը պատկանի, Յունաց լուսարարըն ընդ աաաաջենելով կամեցած է արգելու, բաց թափօրականք վերարկուներու տակ բիրեր և գրուանաց մէջ քարեր ունենալով յարձակած են Յոյն լուսարարի վերայ, աղաղակն մեծնալով Յունաց վանքէն ուրիշ մի արաններ ևս յօդնութիւն վազած են, և ընդդիմագրութեան ստուախի միջոցին թափօրականներէն մին, Յոյներն ծե-

Տելու համար, կամեցած է քշոյն մեր լուսարարի ձեռքբէն կորզել, և նա դէմ դնելով որպէս զի մեր պատարագն չխափանեն, ձեռքն վիրաւորուած է, և թէ պէտքշոյն տուած չէ, բայց թափօրականն մեր սեղանի վրայէն մեծ խաչ մի յափշուակելով՝ նովու վիրաւորած է Յոյն լուսարարի գլուխն, որով և կը տոր կառը եղած է մեր խաչն։ Սոյն ամօթալի գանակութեան միջցին Տէրութեան յիանապէտ մի զինուորներով հանդերձ վերայ կը համանի մի ջամտելու և խաղաղացնելու համար, ասկոյն նորա բթամատն եւս կը կոտրուի լսատինական հարուածոց տակ։ Այս բարբարոսական անցքն կ'անցնի մեր պատարագի ժամանակ, և թէ Ենչպէս կը կատարուի նոյն պատարագըն, կը թողումք որ այլք իմաստամիքն։

Երբ այսպիսի տեսարաններ կը ներկայանան Սուրբ Տեղեաց մէջ, որք խաղաղութեան սրբավայրներ եղած են՝ ի սկզբան քրիստոնէութեան։ Երբ այսպիսի անտի-քրիստոնէական խռովութիւնք կը յուղուին այն տեղեաց մէջ, ուր աղօթք և փառաբանութիւնք կը կատարուին, սոսկմամբ կը պաշարուի գգայուն քրիստոնէայն, և ցաւօք սրուի կրատիպուի ասել, որ տակաւին մոլեռանդութիւնն մեծ

Ա. Աթուոյս Միաբան Զաքարիա Վարդապետն Լաթարիայէն կը գրէ։ «Յայտնի է Հաւեպահ Պարոննեան անուանարկ Գէորգ Վարդապետի կուռակրոն ուխտադրութին ասպօթինաւոր ամսունութիւնն, և այսուհետեւ կամթող անվաներ քահանայագործութեամբ շագուային գիւղն քանի ապրի է՝ ի վեր ապրին։ Այս սրատձառաւ Կիլիկիո Սրբավագցն Մկոտի կաթողիկոսէն քանի մի անդամ քաղցրութեամբ կոչուելով ինքն զինքն պաշտպանելու համար ազգուրացութեամբ գիման է տեղոյն Յոյն եպիսկոպոսի իրաւասութեան։ օտար ազգաց առջեւ Աղջեղուու պատկառելի պատիւն և հաւան ու կրօնին պատաւորելով կրկնամկրուութեամբ և վերատին կարգ ընդունելով եպիսկոպոսին, որ Յունաց Եկեղեցւոյն մէջ բազը յունազի ժամանակ յայտնի համարձակ կը ծանուցանէ թէ՝ Հայոցզի Գէորգ Վարդապետն ու վերավ յունակրոն ուղղափառ Եկեղեցւոյ որդեգրիւ, վանորդ մենք զինքն ըստ պահանջման անցեալ շաբաթ օրն, Զհ Փետրվարի, Մար Ճրմէս եկեղեցին կրկնամկրուութեամբ գրոշմեցիք, այսօք ալ կուռակրոն արքմանարիստ կը ձեռնադրելիք զինքն Եագուակի զիւղի Հայոց ազգէն յունացաներուն վրայ ու և այլն և այլն։ Աը ցաւիօք որ Առաքով բարձրի խօսքն և Յունաց Եկեղեցւոյ գրոշըն ամեններն իրարու չեն համապատասխաներ։ Այս գէորգն մեր ազգային լրապրաց ու շատրութեան կը յանձնելու ։ Իսկ մէր ուրախ Էմբը որ կրկնամկրուութեամբ անպիտաններն մեր Աղդէն կը հնանանան։

գեր կը խաղաց քրիստոնէական փրկարար և երջանկարար կրօնին անուամբ, որց հիմն է սէրն, և շինուածն խաղաղութիւն, արդարութիւն, ճշմարտութիւն և սրբութիւն։

— Ի 26 ամսոյս լսուեցու թէ երկու Ռուսազդի ու խստաւոր կիներ սասամիկ արբենապով և միմեանց հետ կը ռուի բռնուելով մէկն փարբիկ գաշցնով մորթեած է զմիւան և Հիւպատուարանի կողմէն բռնուելով բանտարկուած է։ Ահա հետեւանդք լիտի ուխտաւորութեան։

— Ներկայտարւոյ մէջ խիստ բայց մաթիւ են Երուսաղեմի ուխտաւորներն, որոց մէջ գլխաւոր տեղ կը գրաւեն Եւրոպացիք, որը թէեւ երկար չեն մեար այս տեղ, բայց անընդհատ կերթեւեկեն մեծամեծ խումբերով։

Վ. Ք. Խ. Պ. Ա. Կ. Ք.

Փետրվար ամսոյ Ախօնի մէջ Եղած Կիսրոսի հաշուեկըցն արկլի վիճակին ելից կողմը ըսրորդ տողը 57 օ/4 ի տեղ՝ 573 օ/4 ըլլալու է։

Փետրվար ամսոյ Ախօնի 39 երես 22 տողին մէջ յերեւան բառը յերեւան սիրտի լինի։

ՑԱՆԿ

ՄԱՐՏ

Որդիք Աստուծոյ .	49
Անցք Մեծին Նախալընի ընդ նիւմնն գետ .	54
Ուխտաւորութիւն .	57
Երգ ՚ի վերայ Երուսաղէմի .	60
Եգեսիա .	61
Հետ պանդուխտն .	62
Համաւօտ պատասխաններ .	63
ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ . — Համառօտութիւն քրիստուկան ուսման . — Ճաշոց դիբք . — Առենի Աւետարան .	64—67
Մի դիսաւոր պայման պատմադրութեան .	68
Ազգային կոտակադիք .	70
ԺԱՄԱՆԱԿԸԳՐԱԿԸՆՔ .	71
Կրինամկրտութիւն և կրինաձեռնադրութիւն .	72

ԲԱԺԱՆԱԳՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Այսուր ամեն եւ հրատարակուի 24 երեսէ բազկացեալ մէկուկես ուժածալ թղթուոյ :
- Բ. Տարեկան գինն է երմու արծութ Արէջանից ։ Հանդերձ ճանապարհի ծափրութ կանոնիկ մասրելի :
- Գ. Չուն անարակ առնել ուզողը ։ Դիեռը և ամեն մէկ անարին չըրու գուհելուն վճարել :